

551  
Թ. 78

Հայոց գիտությունների պահպան

այլոց Հրատարակչական Ընկերություն,

№ 113

4960

Ն. ՌՈՒԲԵԿԻՆ

# ԶՐՈՅՑՑՆԵՐ

ԲՆՈՒԹԵԱՆ ՄԵՇ ԵՒ ԱՀԵԴ

ԵՐԵՒՅՑՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վաղարշապահ Պատմական Գրադարան



(10 պասկեբուլ)

Թ. Կ. Ֆ. Լ. Խ. Ս.

Տաղարան Մ. Դ. Ռօմինեանցի

1896

2010

Թիֆլիսի Հայոց Հրատարակչութեան Ընկերութիւն:

**No 113**

### Վ. ՌՈՒԲԵՆԻԿԻ

551  
0-78

# զՐՈՅՑՑՆԵՐ

## ԲՆՈՒԹՅՈՒՆ ՄԵԾ ԵԴԱՀԵՆ

## ԵՐԵՒԱՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1004  
15038

## Ուսերէնից Թարգմանեց

## Ա. ՏԵՐ-ԱՆԴՐԻՔԱՍՏԵԱՆ

2002

ՊԵՏՈՒ

## Տպարան Ա. Դ. Ռոտինեանցի

Типогр. М. Д. Ротиніанца, Гол. пр., д. № 41.

1896



Дозволено Цензурою. Тифлисъ, 15 Января 1896 г.



ԶՐՈՅՑՆԵՐ

## ԲՆՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԵՒ ԱՀԵՂ

## ԵՐԵՒԱՑԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ՞ՆՉԱԼԻՍԻ ՄԵԽԻԼՅԱՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ:

Հարիւր տարի սրանից առաջ Եգիպտոս  
սում պատերազմ կար. Փրանսիացիները պա-  
տերազմում էին Եգիպտացիների հետ: Մի  
անգամ Փրանսիական զօրքը անցնում էր ա-  
նապատով, Եգիպտոսի աւագոտ անապատում  
ոչ ջուր կար և ոչ բուսականութիւն: Արել  
այնպէս էր այրում, որ մարդու շունչը կտրը-  
ւում էր: Կէսօրից արդէն անցել էր: Զի-  
նուորները լոգնել էին: Քաղցածութիւնը նե-  
ղացնում էր նրանց, տօթը և անտանելի ա-  
ւագոտ ճանապարհը ևս առաւել, իսկ ամե-  
նից շատ տանջում էր խեղճերին—ծարաւը:  
Նատ զինուորներ էլ չեին կարողանում գնալ,  
չնչասպառ վայր էին րնկնում և մեռնում:

Յանկարծ բլրի յետևից երևաց մի ընդարձակ, վճիտ լիճ։ Լճի ափերին կանաչին էին տալիս թփեր, կանգնած էին արմաւենիներ, իսկ սրանց շուաքում երևում էին սպիտակ տներ։

— Զուր, զուր, — գոչեցին զինուորները՝ լարելով իրանց վերջին ոյժերը և վազելով դեպի լիճը։

Բայց ինչքան գնում էին, դարձեալ չէին մօտենում լճին. լիճը գեռ էլի հեռու էր և կարծես թէ փախչելիս լինէր նրանցից։ Թը շուառների ծարաւը աւելի ևս սաստկացաւ և նրանք հազիւ էին առաջ գնում։

Բանը նրա մէջն է, որ այդ տեղերում լիճ չըկար և երբէք էլ չէր եղել։ Զինուորների տեսածը՝ տեսիլը էր։ Երեկոյեան երբ արել իջաւ, — լիճն էլ, սպիտակ տներն էլ, կանաչազարդ ափերն էլ — կորան, անհետացան։ Իսկ միւս օրը կէսօրին կրկին երևաց նոյն տեսիլքը։

Նատերն են տեսել այդպիսի տեսիլքներ և այժմ էլ շատերին է պատահում տեսնել։ Յաճախ այդ տեսիլքները երևում են անպատի բնակիչներին՝ արաբներին։ Այդ տեսիլքները անուանում են միջրաժ։ Միջրաժ

կարելի է տեսնել թէ ծովի և թէ ցամաքի վրայ, թէ տաք և թէ ցուրտ երկրում, բայց միշտ հանդարտ եղանակին։

Ականատեսները զարմանալի բաներ են պատմում այդ տեսիլքների մասին։ Ահա այդ պատմութիւններից մէկը. Հիւսիսային ծովի վրայ մի շոգենաւ էր գնում։ Եղանակը հանդարտ էր։ Յանկարծ երկնքում մի նաւ երեւաց, որ առագաստաբաց այնպէս էր սլանում օդում, կարծես թէ ջրի վրայ լինէր։

Նաւի վրայի մարդիկն ու թնդանօթներն էլ երևում էին։

Նաւաստիները օդային նաւը տեսնելով՝ վախեցան և իմաց տուին նաւապետին։ Հէնց որ նաւապետը տեսաւ — իսկոյն իմացաւ թէ բանն ինչո՞ւմն է։

Օդային նաւը բոլորովին նման էր այն նավին, որ մի քիչ առաջ պատահէլ էր իրանց։ Այն նաւը վազուց արդէն աչքից կորել էր, բայց այժմ օդում տեսնում էին նրա իսկական պատկերը, այնպէս որ երկինքը կարծես թէ հայելի լինէր։

Այն նաւը այժմ արդէն հեռացած էր. անկարելի էր տեսնել նրան։ Իսկ օդում կարելի էր տեսնել նրա արտացոլած պատկերը

(отражение): Բոլորովին նոյն բանը կը լինէր,  
եթէ երկրից շատ վերև մի մեծ հայելի լինէր  
և մենք նրա մէջ տեսնէինք այն նաւը: Հան-  
դարտ եղանակին օդն էլ մի այդպիսի հայելի  
է դառնում:

Այդպիսով նաւաստիները հասկացան, որ  
երանց տեսածը ոչ թէ տեսիլք էր, այլ մի  
քանի ժամ առաջ պատահած նաւի պատկե-  
րը: Օդը, հայելու նման ցոյց էր տալիս նը-  
րանց թէ նաւը, թէ ալիքները, և թէ ծովը:


Մի նկարիչ պատմում է, թէ ճանապար-  
հորդութեան ժամանակ մի անգամ երկրն-  
քի վրայ մի ամբողջ քաղաք է տեսնում  
իւր աշտարակներով, զանգակատներով ու տը-  
ներով և նկարում է արդ տեսիլքը: Նկարե-  
լուց յետոյ տեսիլքը աչքիցը կորչում է և  
նկարիչը շարունակում է իւր ճանապարհոր-  
դութիւնը: Մի քանի ժամից յետոյ յանկարծ  
մի բլրի յետևից երկում է այն քաղաքը, որ  
նա արդէն նկարել էր. նկարածի և նոր տե-  
սած քաղաքի մէջ եղած զանազանութիւնը  
այն է լինում, որ առաջվայ տեսածը երկրն-  
քումն էր, իսկ այժմ նոյն բանը նա տես-  
նում էր երկրի վրայ: Պարզ բան է, որ նրա  
մի քանի ժամ առաջ տեսած և նկարած քա-

դաքը տիդ նոյն քաղաքի արտացոլած պատ-  
կերն էր եղել:

Պետերբուրգից 38 վերստ հեռաւորու-  
թեան վրայ կայ մի փոքրիկ քաղաք (Օրա-  
նիենբաում): Այդ քաղաքից հազիւ հազ է ե-  
րևում Պետերբուրգը, բայց պատահած կայ,  
որ յանկարծ օդում երևացել է Պետերբուրգի  
արտացոլած պատկերը: Այդ գէպքում օդը  
հայելու նման արտացոլել է և նէվա գե-  
տը, և իսահակեան տաճարը իւր ոսկեզօծ  
գմբեթներով, և նաւերն ու շոգենաւերը: Այդ  
տեսակ տեսիլք կամ միրաժ առաջին անգամ  
տեսնողը կը զարմանայ, գուցէ վախենայ էլ:  
Իսկ ով որ մի քանի անգամ է տեսել և հաս-  
կացել՝ թէ ինչումն է բանը—նրա համար  
զարմանալու ոչինչ չըկայ: Մարդիկ այն բա-  
նի վրայ են զարմանում և հրաշք համարում,  
ինչ որ իրանց համար անսովոր և անհասկա-  
նալի է: Իսկ երբ նոյն բանը մի քանի ան-  
գամ են տեսնում և հասկանում են պատ-  
ճառը—էլ չեն զարմանում:

Շատ նաւաստիներ պատմում են, որ օ-  
գում երևցած նաւերի կալմերը երբեմն դէ-  
պի վեր են լինում, երբեմն դէպի ցած: Դրա  
պատճառը այն է, որ օդը հայելու նման է

ցոյց տալիս. եթէ հայելին գլխիդ վրայ բըռ-  
նես, —քեզ գլխիվար կը տեսնես, իսկ եթէ  
հայելին առաջդ պահես —այնպէս կը տեսնետ



Սիրաժներ —օդաչին նաւեր:

Նաւաստիները ծովի ափից օդի մէջ տեսնում են ծովում,  
իրանցից հեռու, լողող նաւերի արտացոլումը:

քեզ, ինչպէս կանգնած ես, ալսինքն գլուխդ-  
դէպի վեր: Հայելու լաւն էլ է լինում, վատն-  
էլ: Օդն էլ երբեմն լաւ հայելու նման մաքուր  
է ցոյց տալիս, երբեմն վատ հայելու նման  
պղտոր և խառն ի խուռն: Նատերին լայտնի-  
կը լինի, որ ծովն էլ հանդարտ եղանակին հա-  
յելու նման է լինում և նրա մէջ երեսում են-  
թէ երկինքը և թէ ափերը: Հանգիստ ժամա-  
նակ ծովը լաւ հայելու է նման, իսկ թեթև  
ալիքների ժամանակ թէպէտ նոյնպէս կարելի  
է նրա մէջ տեսնել երկինքը և ափերը, բայց  
ոչ ալնպէս պարզ: Օդն էլ նոյնպէս երբեմն  
(հանդարտ եղանակին) — լաւ հայելու է նման,  
իսկ երբ նոյն իսկ մի թեթև քամի է լինում  
— վատ հայելի է դառնում:

Սառուցեալ ովկեանոսում մի նաւավար մի  
ալսպիսի տեսիլք տեսաւ: Յանկարծ օդի մէջ  
սարեր, սառուցներ, ժայռեր և կղզիներ երեա-  
ցին, որ կարծես թէ կախված լինէին օդում:  
Նրանց ձեւերը ամեն ըովէ փոփոխվում էին:  
Սարերն ու սառուցների ահագին կտորները  
մերթ լայնանում էին, մերթ նեղանում, մերթ  
իջնում ծովի վրայ և մերթ օդը բարձրանում: Գորշ ժայռերը երբեմն ձգվում էին և զան-  
գակատան նմանութիւն ստանում, երբեմն էլ

լայնանում և ամրոցի ատամնաւոր պարսպի նմանում։ Երբեմն ձորեր էին երևում իրանց ծառերով ու գազաններով։ Դազաններն էլ փոփոխում էին իրանց ձևերը և վեր ու վար թռչկռտում։

Հարաւալին Խտալիալում, Մեսսինեան ծոցի վրայ, արևածագին երբեմն աւելի հրաշալի տեսիլքներ կամ միրաժներ են երևում։ Յանկարծ ծովի վրայ նկատում են պալատներ, բուրգեր, սիւների ամբողջ շարքեր, տներ իրանց պատուհաններով ու պատշգամբներով, ծառեր, ծմակներ իրանց վրայ արածող հօտերով, ձիաւոր ու հետեւակ մարդիկ։ Այդ բոլոր տեսիլքները կամ ի մի են խռնվում, կամ հեռանում են իրարից և միմեանց յետերից վագում ծովի վրայ։ Այդ տեսիլքը այնքան հրաշալի է, որ արդէն մի քանի հտրիւր տարիներ պախարդ Մորդանի տեսիլք» անունովն է յայտնի։

Բայց իսկապէս ամենեին հրաշք չէ այդ, որովհետեւ այդ պալատներն էլ, բուրգերն էլ, տներն էլ... որ երեսում են ջրի վրայ, բոլորն էլ կան, գոյութիւն ունեցող բաներ են, միայն ոչ թէ ծովի վրայ, այլ ցամաքի։ Այդ բոլորը արտացոլւում է օդում։ Եւ օդի օրօ-

քռւիլը կամ շարժուիլն է, որ պատճառ է դառնում այդ տեսիլքների շարժուելուն։ Միայն այն մարդիկ, որ չըգիտեն թէ ինչից են առաջ գալիս այդ տեսիլքները, միայն նրանք են կարծում, թէ իրանց տեսածը հրաշք է։ Իսկ հասկացողը գիտէ, որ իր բոլոր տեսածները գոյութիւն ունեցող առարկաների պատկերներ են, որ օդի մէջ այնպէս են երևացել, ինչպէս մեր պատկերը հայելու մէջ։ Միայն օդը միշտ լաւ հայելու նման չէ։

Ալժիրում մի ձոր կայ, որ կոչվում է «Տեսիլքների ձոր»։ Ահա թէ ինչ է պատմում այդ ձորի մասին մի Փրանսիացի սպայ, որ ծառայում է եղել այդ երկրում։ «Մի անգամ, ձորի մուտքի մօտ, նստեցի մի քարի վրայ, որ հանգստանամ։ Յանկարծ տեսնում եմ — ինձնից մի կէս վերստի վրայ — մի մարդ՝ նոյնակս քարի վրայ նստած։ Երբ ես վերկացայ, — նա էլ վերկացաւ։ Դիմեցի գէպի նրա կողմ, — նա էլ գէպի ինձ եկաւ։ Նուտով նկատեցի, որ նա էլ էր սպայ, — և հէնց մեր գընդի նշանազգեստն ունէր։ Երբ աւելի մօտեցանք իրար, որքան մեծ էր իմ զարմանքս, երբ ես ճանաչեցի, որ այդ մարդն էլ ես էի։ Այդ նմանութիւնը այնքան վա-

իեցրեց ինձ, որ ես ձեռքս մեկնեցի նրան։  
Նա էլ ինձ մեկնեց իւր ձեռքը։ Ես թուրս  
հանեցի և յարձակուեցի տեսիլքի վրայ։ Նա  
էլ հանեց իւր թուրը և ինձ վրայ յարձա-  
կուեց։ Բայց հէնց որ մի քանի քալ անցալ,  
տեսիլքը չբացաւ։

Միայն այդ ժամանակ է հասկանում սպան,  
թէ ինչումն է բանը։ Նա սաստիկ ամաչում  
է իւր վախից։ Ինչի՞ց էր վախեցել մարդը։ —  
Իւր ստուերից։

Նոյն երկոյթը, նոյն ձորում դիտել են  
և ուրիշ սպաներ և զինուորներ։ Մի զինուոր  
այնպէս էր վախեցել տեսիլքից, որ վայր էր  
ձգել իւր սուրը, վախել էր բերդը և պատ-  
մել, թէ սեպհական աչքերով տեսել էր, որ  
նրա յետեկցն են արել մի խումբ քաջքեր։  
Զինուորը այնքան համոզված էր պատմում,  
որ նրան հաւատացել էին և տյդ օրուանից  
ձախն էր ընկել քաջքերի մասին։ Բայց իսկապէս  
այն էր պատահել, որ զինուորը իւր պատկե-  
րիցն էր վախել, իսկ ստուերն էլ իրանից։

Գերմանիայում կայ մի փոքրիկ սար Բըո-  
կէն անունով։ Նատերն են բարձրանում այդ  
սարը «Բըոկենեան տեսիլք» անուանուած հե-  
տաքրքրական երկոյթը տեսնելու համար։

Առաւոտեան արևածագին են բարձրանում  
աարը։ «Մենք, — ասում է մի ճանապարհորդ,  
— բարձրացանք սարը վաղ առաւոտ։ Երկին-  
քը մաքուր էր։ Ներքեում, սարի տակ, քա-  
մին ցրւում էր թեթև մառախուղը։ Կանգ-  
նեցի սարի գագաթին՝ մէջքս դէպի արևը և  
ակսեցի նայել երկնքին։ Յանկարծ առաջս տե-  
սայ մի ահագին մարդ — մի հսկայ։ Արևը յե-  
տեումս էր և հսկան ստուերի էր նման։ Այդ  
ժամանակ քամի բարձրացաւ, որ քիչ էր մը-  
նում գդակս թուցնէր։ Ես բարձրացրի ձեռքս,  
որ գդակս պահեմ, — հսկան էլ բարձրացրեց  
իւր ձեռքը։ Այդ միջոցին ընկերս մօտեցաւ ինձ։  
Օգումն էլ, այն հսկայի կողքին, էլի մի ու-  
րիշ հսկայ երկաց։ Երկու հսկաները կրկնում  
էին մեր բոլոր շարժուածքները։ Ինչ որ մենք  
էինք անում ։ Նրանք էլ նոյնն էին անում։  
Ի՞նչ հսկաներ էին գրանք։ Այդ մեր սեպհա-  
կան ստուերներն էին, որ ընկնում էին ներ-  
քեից բարձրացող մառախուղի վրայ։ Մի քիչ  
յետոյ քամի բարձրացաւ ու ցրուեց մտա-  
խուղը — հսկաներն էլ կորան։ Յետոյ էլի սա-  
րի տակից մառախուղ բարձրացաւ, և կրկին  
երկացին հսկաները։

ծիածանագոյն շրջաններ եւ թագեր, լուսե-  
ղին սիւններ եւ խաչեր՝ երկնքում:


Միմիայն բրոկէն սարի վրայ չէ, որ երե-  
ւում են այդ տեսիլքները: Ցուրտ ժամանակ  
աւելի զարմանալի տեսիլքներ են լինում: Մի  
անտառապետ պատմում է թէ ինչպէս ինքը  
մի անգամ բարձրացել է Ալպեան լեռների  
գագաթներից մէկի վրայ: Երկինքը պարզ է  
լինում, օդը հանդարտ, բայց սաստիկ ցուրտ։  
Ներքեից, սարի լանջերով քիչ քիչ սկսում է  
մառախուղ բարձրանալ, որ վերջապէս ծած-  
կում է թէ սարը և թէ անտառապետին: Մա-  
ռախուղը բարձրանալիս ներկւում էր ծիածա-  
նի զանազան գոյներով: Այդ գոյները սկըզ-  
բում հազիւ նշմարելի էին, իսկ մի քիչ յե-  
տոյ բոլորովին որոշուեցին, թանձրացան և  
իսկոյն միացան՝ ծիածանի մի անընդհատ  
շերտ կազմելով: Ծիածանը կորանալով վեր-  
ջապէս մի օղակ կազմեց: Այդպիսով երկըն-  
քում մի օղակածե ծիածան գոյացաւ: Մի  
քիչ յետոյ մառախուղում երկրորդ ծիածա-  
նի օղակ երեաց, միայն այս անգամ աւելի  
գունատ: Վերջապէս մի երրորդն էլ երե-  
ւաց: Այդ երեք օղակները՝ մէկը միւսի մէջ

էին: Յանկարծ այդ շրջանների մէջ տեղ,  
մառախուղում անտառապետը մի մարդ տե-  
սաւ և շուտով ճանաչեց, որ այդ իր պատ-  
կերն է: Անտառապետը շարժեց իւր գլուխը  
— երեք ծիածանէ շրջաններն էլ շարժուեցին:  
Այդ երեսոյթը տևեց մի քանի րոպէ, ապա  
անհետացաւ: Ծիածանի շրջաններն էլ անհե-  
տացան՝ թողնելով իրանց տեղում միտին գորշ  
ու խիտ մառախուղ:

Պատկերի շուրջը երեացող ծիածանագոյն  
շրջանները ոչ միայն սարերի գագաթներին  
են պատահում, այլ ցուրտ օրերը, սառը եր-  
կրներում, այդ երեսոյթը տեղի է ունենում և  
տափարակ գաշտերում: Մի նաւաստի պատ-  
մում է, որ մի անգամ նրանց նաւը Սառու-  
ցեալ ովկեանսում ընկնում է խիտ մառա-  
խուղի մէջ: Երբ առաւօտը ծովի վրայ արեւը  
դուրս է գալիս, նաւաստին մառախուղում  
տեսնում է իւր ստուերը: Ստուերի գլուխը  
շրջապատուած էր չորս ծիածանագոյն օղերով:  
Այդ օղերը մէկը միւսի մէջ էին, իսկ նրանց  
մէջ տեղ երեսում էր ստուերի սև գլուխը:

Ծիածանագոյն շրջանները մեր կողմերու-  
մըն էլ են սլատահում: Երբեմն այդ շրջան-  
ները ցուրտ ձմեռալին գիշերով կարելի է  
տեսնել լուսնի շուրջը: Պատահում է երբ

Հուսնի շուրջը մէկ շրջան է լինում, և պատահում է նոյնպէս երբ մի քանիսն են լինում մէկը միւսի մէջ։ Այնպէս էլ է պատահում, որ երկնքի վրայ միանգամից շատ ծիածանագոյն շրջաններ են երեսում։ Այդ շրջանները երբեմն մէկը միւսի մէջ են լինում, երբեմն մէկի կողքը միւսի վրայ է գալիս։



Ծիածանագոյն շրջաններ։

Երջանները միմեանց մէջ են, իսկ մէջ տեղում գտնում է մարդուս ստուերը։

Յուրա երկներում այդ շրջանները ցերեկով են երեսում արեի շուրջը։ Արեը գլխաւոր շրջանի մէջ տեղումն է լինում։ Երբեմն այդ միջոցին երկնքում լուսեղէն խաչ է երե-

տում և արեը այդ լուսեղէն խաչի մէջ տեղումն է լինում։

Գիշերն էլ է լուսեղէն խաչ առաջանում երկնքում։ Մի նաւաստի պատմում է, որ մի անգամ գիշերով լուսնի շուրջը գոյնգոյն շրջան է տեսնում։ Շրջանի մէջ սպիտակ խաչ էր երեսում, իսկ լուսինը խաչի մէջ տեղում։ Խաչը բաւական փայլում էր, թէպէտ ոչ լուսնի պէս պայծառ։ Իսկ խաչի աջ ու ձախ կողմը, երկնքում, երկ-երկու լուսիններ էին երեսում և այդպիսով նաւաստին երկնքում մի անգամից հինգ լուսին էր տեսնում, որոնցից մէկը իսկական լուսինն էր, իսկ մընացած չորսը իսկականի արտացոլած պատկերներ, կամ «կեղծ լուսիններ» ինչպէս անուանում են դրանք։ Այդ կեղծ լուսինները զուրկ են իսկականի լուսից ու փայլից։

Նատերն են փայլուն խաչ տեսել երկնքում։ Եթէ ցերեկ է, խաչի կենդրոնում լինում է արեր, իսկ գիշերը՝ լուսինը։ Ցուրա երկներում յաճախ են երեսում լուսեղէն խաչեր, բայց երբեմն պատահում են և մեր երկըներում։

Երբեմն երկնքում մի արեի տեղ երկուսն են երեսում։ Մէկը՝ իսկական արեը, միւսն



էլ—նրա արտացոլած պատկերը։ Կամ թէ երբեմն կեղծ արևը երևում է իբրև մի լուսեղէն սիւն և այնպէս է փայլում, կարծես թէ արեգակի ճառագալթներից լինի։

Ե՞րբ են այդ երևոյթները պատահում երկընքում և ինչպէս։ Այդ զարմանալի երևոյթները միշտ շատ պարզ պատճառ իցեն տուած գալիս։ Կեղծ արևը միշտ կամ ամպի, կամ մառախուզի վրայ է արտացոլում։ Ամենքին լայտնի է, որ երբեմն պատուհանի ապակիները արևի տակ փայլիլում են, որովհետեւ այդ ապակիներից արտացոլում է արևի լոյսը, ինչպէս հայելուց։ Սառոցն էլ է փայլիլում արևի ճառագալթներից։ Արևը ամպի կամ մառախուզի մէջ նոյնպէս կարող է անդրադառնալ, երբ ամպը կամ մառախուզը նրա դիմացն են։ Ամեն ամպի ու մառախուզի մէջ չէ անդրադառնում արևը։ Այնպիսի մառախուզ կայ, որ կազմուած է մանըր ու բարակ սառցէ տսեղներից։ Սաստիկ ցրտերին շատերը տեսած կը լինեն այդ սառցէ տսեղները։ Ահա այդ տսեղներից երբեմն ամբողջ ամպեր են կազմւում։ Ի հարկէ այդպիսի ամպեր ամենից լաճախ լինում են ցուրտ երկրներում, բայց մեզ մօտ էլ երբեմն կարող են տեղի ունենալ։ Ահա այդպիսի ամպը հայելու նման անդրադառնում է արևի պատ-

կերը և երկնքում երկու արև է երեսում՝ մէկը արևելքում, միւսը արևմուտքում՝ առաջինի դիմացը։ Այդ երեսոյթը պատահում է առաւօտները՝ արևի նոր ծագած ժամանակ։ Խակ երբ մի այդպիսի ամպ կամ մառախուզ արևի ու երկրի, կամ լուսնի ու երկրի մէջն է ընկնում, ահա թէ ինչ է երեսում այն ժամանակ։ Արևի կամ լուսնի ճառագալթները, այդ բազմաթիւ սառցէ մանր ասեղների միջով անցնելիս, սառցէ տսեղները սկսում են փայլիլել ծիածանի գոյներով։ Դրանից են առաջանում ծիածանագոյն շրջանները արեւի կամ լուսնի շուրջը, կեղծ լուսինները, խաչերը, իսկ այս բոլորը նրանից է, որ արևի կամ լուսնի ճառագալթները սկսում են խաղալ օդում լողացող սառցէ մանր ասեղների մէջ, մեղնից շատ բարձր։

Սառցէ տսեղների ամպերը ամառ ու ձըմեռ լողում են օդի բարձր շերտերում։ Միայն թէ ամառը այդ ամպերը շատ բարձր են և այնքան խիտ չեն լինում, ինչպէս ձմեռը։

Ինչքիցն է որ ամառն էլ սառցէ տսեղների ամպեր են լինում։ Նրանից որ այն բարձրութեան վրայ, ուր որ այդ ամպերն են, (մեղնից շատ ու շատ բարձր)՝ միշտ ցուրտ

ու սառնամանիք է լինում: Մարդիկ այդ բա-  
նը իմացել են թէ բարձր սարեր բարձրանա-  
լով, և թէ օդապարիկով մինչև ամպերը և  
նոյն իսկ ամպերից էլ վեր թռչելով:

Երկնքի ցուրտը: Ի՞նչպէս են մարդիկ եր-  
կինքը բարձրանում՝ օդապարիկներով:

Երկրիս վրալ կան սարեր, որ մի քանի  
վերստ բարձրութիւն ունին: Այդ սարերի  
գագաթի ձիւնը երբէք չէ հալում, թէկուզ  
սարի տակը անտանելի շոգ էլ անի: Օրինակ.  
Արարատ (Մասիս) սարի գագաթը, որ  $4\frac{1}{2}$   
վերստ բարձրութիւն ունի՝ միշտ ծածկուած է  
ձիւնի և սառցի սպիտակ գդակով: Մասիսից  
բարձր սարեր էլ կան՝ մինչև վեց, եօթ, ութ  
վերստ բարձրութեամբ: Աշխարհիս ամենա-  
բարձր սարը, որ էվերստ է կոչում (Ասիայում),  
մօտ տասը վերստ բարձրութիւն ունի: Մինչև  
օրս ոչ մի մարդ չէ կարողացել բարձրանալ  
նրա գագաթը: Այդ սարի գագաթը ծածկուած  
է յափառենական ձիւնով և սառուցով, թէպէտ  
և սարը շատ տաք երկրումն է գտնւում. սա-  
րի տակը սաստիկ շոգ է, իսկ գագաթին մըշ-  
տական ցուրտ և սառնամանիք է թագաւոր-

րում: Այդ պատճառով էլ գագաթի ձիւնը  
երբէք չէ հալում:


Բարձր սարեր բարձրանալը շատ դժուար  
է ոչ միայն այն պատճառով, որ ճանապար-  
հը վտանգաւոր է ցրտի, ձիւնի, սառուցների,  
անդունդների ու ժայրերի պատճառով, այլ և  
նրա համար, որ քանի մարդ վեր է բարձրա-  
նում, այնքան դժուարանում ու դժուարա-  
նում է շունչ քաշելը: Բարձրում օդը ներքեսի  
նման խիտ չէ: Վերեսում մարդ երկու—երեք  
անգամ շունչ քաշելով հազիւ է կարողանում  
այնքան օդ ներշնչել, որքան որ ներքեսում  
մի անգամից է ներշնչում: Եւ այդ պատճա-  
ռով մարդս որպէս զի չըխեղջուի, ստիպուած  
է լինում վերեսում շուտ շուտ շունչ քաշել:  
Իսկ երբ տասներկու, տասներեք վերստ  
է բարձրանում, համարեա բոլորովին չէ  
կարողանում շունչ քաշել. շունչը կտրում է  
և ուշագնաց լինում:

Մինչև օրս միայն երկու անգլիացի են  
կարողացել մինչև տասը վերստ բարձրանալ  
օդապարիկով:

Օդապարիկը առհասարակ մետաքսէ կտո-  
րից—թափթից կարած մի գունդ է: Այդ գըն-  
դի երեսին մի տեսակ լաք են քում, որ օ-  
դը էլ չըկարողանայ անցնել թափթի ծակե-

Ծիցը: Գնդի մեծութիւնը եօթ—ութ գազ է լինում: Եթէ մի այդպիսի գունդ ծխով կամ տաք օդով լցնենք,—գունդը ծխի նման վեր կը բարձրանալ: Այդ գնդի վրայ թոկից գործած մի ցանց են գցում և ցանցիցն էլ մի քթոց են կախում: Ահա այդ քթոցի մէջ նստոտում են մարդիկ: Ծխի կամ տաք օդի փոխարէն օդապարիկը կարելի է լցնել և լուսի գազով: Այդ այն գազն է, որով լուսաւորում են մեծ քաղաքների փողոցները: Այդ գազն էլ ծխի նման վեր է բարձրանում, որովհետև օդից թեթև է: Դրանից էլ աւելի թեթև գազեր կան: Ամենաթեթև գազը «ջրածին» է կոչում, որով առհասարակ լըցնում են օդապարիկները: Ահա մի այդպիսի օդապարիկով էր, որ 1862 թուի սեպտեմբերի 5-ին բարձրացան Դլէշէր և Կօքսվէլ անգղիացիները: Օդապարիկը արագութեամբ սկսեց վեր թռչել և քանի վեր էր գնում, այնքան տւելի և աւելի ցուրտ էին զգում բարձրացողները: Երեք վերստ որ բարձրացան—ամպերին հասան: Այդտեղ նըանք նկատեցին, որ ամպը ոչ այլ ինչ է, եթէ ոչ երկրից բարձր կանգնած մառախուղ: Երբ որ օդապարիկը ամպի միջովն էր անցնում, երկու ճանապարհորդները դողում էին ցրտից ու խոնաւու-

թիւնից: Ամպի մէջ ոչինչ չէին տեսնում, ինչպէս որ լինում է երկրիս վրայ, մառախուղի ժամանակ: Երբ օդապարիկը ամպերիցը վեր բարձրացաւ—կրկին լուսացաւ, էլի կապուտ երկինք ու արև երևացին:



Օդապարիկը բարձրացել է մինչև ամպերը.

Բարձրից նայելիս ամպերը սպիտակ, խորդու բորդ, ձիւնապտու գաշտի էին նմանում: Ամպերի ճեղքերից տեղ տեղ երևում էր երկրիրը՝ գիւղեր, անտառներ, քաղաքներ, ծով և նաւեր:

Ամպերից բարձր՝ ցուրտը աւելի սաստկացաւ: Չորս—հինգ վերստ բարձրութեան վը-

բայ ջուրը սառեց արդէն։ Շունչ քաշելը դը-  
ժուարացաւ, ականջները խշխշալ սկսեցին և  
սրտները արագ թութուալ։ Բայց քաջ անգլիա-  
ցիները առանց վհատուելու համբերում էին  
և կրկին վեր բարձրանում։ Ուժ վերստ բարձ-  
րութեան վրայ նրանցից մէկը—Գլէշէրը—  
այնքան թուլացաւ, որ չէր կարողանում ոչ  
ձեռքը բարձրացնել և ոչ էլ մարմինը շար-  
ժել։ Գլէշէրը վերջապէս ուշաթափուեց։ Իսկ  
օդապարիկը բարձրանում էր ու բարձրանում։

Երկու քաշերին էլ մահ էր սպառնում։  
Երկիրը տասը վերստ ցած էր գտնուում նրանցից։  
Գլէշէրը կտպտել էր և ձեռելի նման վայր ընկել  
քթոցի մէջ։ Միւս ընկերը—Կօքսվէլը—նոյն-  
պէս սառել էր և հազիւ հազ էր շունչ քաշում։  
Իւր վերջին ոլժերը հաւաքելով Կօքսվէլը ուզեց  
ձեռքը բարձրացնել և օդապարիկի ծակը բա-  
նալ, որ միջի գազը դուրս գալով՝ օդապարի-  
կը ցած գայ, բայց ձեռքը փալասի նման կախ  
էր ընկել և չկարողացաւ։ Այն ժամանակ նա  
տատամներով բոնեց այն թոկը, որով կապուած  
էր այդ ծակը, քաշեց ու բանալով՝ թողեց,  
որ օդապարիկի գազը քիչ քիչ դուրս գալ։ Օ-  
դապարիկն էլ սկսեց կամաց կամաց ցած գալ։

Նրանք բարձրացել էին տասը վերստից մի-  
քիչ աւել և այդ բարձրութեան վրայ քսան

և չորս աստիճան ցուրտ էր եղել, մինչդեռ  
ներքեռմ այդ ժամանակ ամառ էր։ Ներքե-  
ռում օդը խիտ էր և մարդուս շնչառութիւ-  
նը հանգիստ։ իսկ վերևում այնքան նօսր էր  
օդը, որ մեծ դժուարութեամբ էին շունչ  
քաշում։

Բացի այդ երկու անգլիացիներից ուրիշ  
շատ մարդիկ են բարձրացել օդապարիկնե-  
րով, բայց ոչ ոք չէ հասել այդ սարսափելի  
բարձրութեան։ Նատ շատ բարձրացել են  
ութ ու կէս վերստ, աւելի ոչ ոք չէ բարձ-  
րացել։ Դժբախտ դէպքեր էլ են պատահել  
օդագնացների հետ։ շատ անգամ օդապարի-  
կի գունդը տուաքուել է և մարդիկ քթոցով,  
ահուելի բարձրութիւնից վայր են ընկել և  
ջարդուել։ Պատահել է նոյնպէս, որ քամին  
օդապարիկը ծովն է տարել։ Բայց և այնպէս  
շատ մարդիկ լաշողութեամբ բարձրացել են  
վերև և ցած իցել։

Բոլոր բարձրացողները միաձայն պնդում  
են, որ բարձրում միշտ ցուրտ է և ոչ միայն  
աշնանն ու ձմեռը, այլ և ամառը։ օդն էլ  
այնքան նօսր է ալնտեղ, որ մարդուս շունչը  
կտրում է։ Եւ քանի վեր ես բարձրանում,  
այնքան աւելի ու աւելի է նօսրանում օդը։

Այս բոլորից յետով դժուար չէ հասկա-

Նալ, որ օդը մինչև աստղերն ու լուսինը չէ  
հասնում։ Հաւանական է, որ երկրից երեք—  
չորս հարիւր վերստ բարձր՝ էլ բոլորովին օդ  
չը կայ։

Թէ ինչո՞ւ է միշտ ցուրտ լինում երկնքում։

Ինչո՞ւ միշտ ցուրտ է լինում երկրից վե-  
րև՝ երկնքում։—Որովհետեւ օդը ո՞չ թէ արե-  
ւի ճառագայթներիցն է տաքանում, այլ մեր  
երկրից։ Արևը տաքացնում է երկիրս, իսկ  
օդը երկրիցն է ստանում իւր ջերմութիւնը։  
Արևի ճառագայթներից ամենից շատ տաքա-  
նում է հողը, հողից պակաս—ջուրը, իսկ ա-  
մենից քիչ տաքանում է օդը։ Այդ է պատ-  
ճառը, որ ձմեռուայ ցուրտ օրերին, երբ եր-  
կինքը պարզ է լինում։ Կտուրի վրայի ձիւնը  
սկսում է հալուել, մինչդեռ օդը դարձեալ նոյն  
սառնութիւնն է ունենում։ Սորանից պարզ  
է, որ ձմեռուայ արևը կտուրը կարողանում  
է տաքացնել, իսկ օդը ոչ։ Ամառուայ արևը  
նոյնպէս համարեա թէ չէ տաքացնում օդը.  
օդապարիկով բարձրացողները ասում են, որ  
ամպերից բարձր, ուր արդէն արևը երևում  
է, օդը ցուրտ է, իսկ ուտելեղէնի արկղները,  
քիչոցը, աւազը տաքաւուն։

Ասել է որ արևի ճառագայթները օդի  
միջով անցնում են առանց տաքացներու օդը՝  
միշտ այնպէս, ինչպէս և ապակի միջով։ պա-  
տուհանի ապակիները միշտ աւելի սառն են  
լինում, քան թէ նոյն պատուհանի տախտա-  
կը. բայց եթէ ապակին դնէք տախտակի վր-  
քայ, տախտակից ապակին կը տաքանալ, ինչ-  
պէս որ օդի ներքեւի շերտը տաքանում է  
երկրից։

Երկիրը ամառը աւելի է տաքանում, քան  
թէ ձմեռը, այդ պատճառով օդն էլ ամառը  
աւելի տաք է լինում, քան թէ ձմեռը։

Ասացինք որ հողը ջրից շուտ է տաքա-  
նում, բայց շուտ տաքացողը—շուտ էլ սա-  
ռում է։ Պարզ եղանակին ծովից մի քիչ հեռու  
գտնուող ցամաքի վրայ ցերեկը աւելի շոգ է,  
քան թէ ծովի վրայ, բայց գիշերը—ընդհակա-  
ռակը ծովի վրայ աւելի տաք է լինում, որով-  
հետեւ արևը մտնելուց յետով, հողը շուտով  
է ցրտում, իսկ ջուրը երկար պահում է իւր  
ջերմութիւնը։ Աշնանալին առաւօտները ծովա-  
փնեալ տների կտուրները յաճախ սպիտակած  
են լինում եղեամից, մինչդեռ ափից միայն  
մի քանի վերստ հեռու գտնուած նաւերի  
վրայ եղեամ բոլորովին չէ լինում։

Ինչի՞ցն է առաջանում քամին:

Ինչու տաք օդը բարձրանում է դեպի երկինք: Որովհետև ցուրտ օդը քշում, հանում է նրան իր տեղից: Ինչպէս որ ձեթը ջրի երեսն է բարձրանում, այնպէս էլ տաք օդը բարձրանում է ցուրտ օդի երեսը: Եթէ մի ամանի մէջ նախ մի քիչ ձեթ ածենք, լետոյ—ջուր, —ջուրը դեպի վեր կը քշի ձեթը և կը բռնի նրա տեղը: Այսպէս էլ Սահարա անապատի տաք օդը բարձրանում է վեր և նրա տեղը բռնում է շրջակայ երկրների ցուրտ օդը: Ամեն տեղ էլ քամին նոյն պատճառիցն է առաջանում. երբ մի տեղ շոգ է անում, իսկ նրան կից մի ուրիշ տեղում հով՝ իսկոյն տաք օդը սկսում է վեր բարձրանալ, իսկ նրա տեղը գալիս է բռնելու հարեան երկրի ցուրտ օդը: Ահա այս է քամու պատճառը: Սովորաբար ուր որ օդը տաք է լինում և դեպի վեր բարձրանում, այնտեղ է դիմում և շըշապատող երկրների օդը: Երկրիս վրայ միաժամանակ շատ տեղերումն է շոգ լինում, բացի ալդ, եղանակը միշտ փռփռիսում է. ալդ պատճառով էլ զանազան տեղերում, քամին զանազան ուղղութիւններով է փշում: Այդպիսով օդը երկրիս վրայ մշտնջենա-

կան շրջանառութեան մէջ է: Ամեն տեղ կայ օդ և ամեն տեղ ալդ օդը շարժում, տեղափոխում է և ոչ մի տեղ անշարժ չէ մնում: Կան տաք երկրներ և ցուրտ երկրներ. մի տեղ օդը տաքանում է, վեր բարձրանում ու այնտեղ կորցնում իւր ջերմութիւնը (որովհետև վերը ցուրտ է), մի ուրիշ տեղ էլ սառ օդն է ներքեւ իջնում: Քամի չեր անիլ այն ժամանակ միայն՝ եթէ արևը չը տաքացնէր, և եթէ բոլոր երկրներն էլ միմեանց նման լինէին: Այդպիսի բան չը կայ և երբէք չէ էլ եղեւ: Ուրեմն օդը յափտենական շրջանառութեան մէջ է:

Ի՞նչ տեսակ քամիներ են լինում:

Երբեմն այնքան սաստիկ քամի է անում, որ սարսափելիս աւերմունքներ է առաջացնում: Եգիպտոսում մեծ վնասներ է տալիս «Խամսին» կոչուած քամին, որ նշանակում է «իսուն օր փչող»: Խամսինի մօտենալը առաջուց կտրելի է լինում գուշակել երկրների գոյնից: Եգիպտոսի կապոյտ երկինքը դեղնում է, արել սպիտակում է լուսնի նըման: Ծառերի տերեւները կապտին են տալիս: Թուչունները իսկոյն նախագուշակելով

գալիք դժբախտութիւնը այս ու այն կողմն են թռչկոտում։ Մարդիկ շտապում են իրանց բնակարանները։ Օդը՝ թոնրի ալաւի նման հեղձուցիչ է գառնում։ Մարդկանց ու կենդանիների շունչը կտրւում է։ Յանկարծ փոթորկի շուոց է լսում օդում։ Ծառերը քամու ոյժից եղեգնի պէս գետնին են կպչում։ Անասունները մոնչում են։ Տաք քամու ձեռքից ազատուելու հնար չէ լինում. մարդու կոկորդը չորանում է, երեսի ու ձեռքերի կաշին կուչ գալիս։ Փոթորիկը քանի գնում աւելի է սաստկանում։ Երկինքը աւելի ու աւելի մթնում է։ Տաք օդը կոտրատում է ծառեր ու ջինութիւններ աւերում։ Քամին փոշու նման բարակ աւազի դեղին ամպեր է բերում։ Այդ աւազը ներս է թափանցում ամեն մի ճեղքի մէջ. մարդս ստիպուած է լինում շունչ քաշել այդ միևնորդն աւազխառն օդում։

Փոթորիկը տևում է մէկ—երկու ժամ, բայց պատահում է, որ շարունակում է ամբողջ օր։ Ապա հանդարտում է ու մի քանի ժամից յետոյ կրկին նորոգում։ Խամսինը՝ կարճատև ընդհատումներով՝ լիսուն օր է տևում։ Երբ դադարում է այդ սարսափելի քամին, բոլոր ծառերն ու տները ծածկուած

են լինում դեղին աւազով։ Քամին այնքան է բերում այդ աւազից, որ մթնացնում է թէ երկինքը և թէ օդը։

Աւազաբեր փոթորիկներ Սահարա անպատում էլ են լինում և ալստեղ «Սամում» անունն են կրում։ Վայ այն դժբախտ ճանապարհորդին, որ Սամումի բերանը կ'ընկնի Սահարայում, նրա մահը գրեթէ անխուսափելի է. երկինք բարձրացած աւազը իւր տակը կը թաղի նրան։ Քամին վեր է թռցնում շիկացած աւազը և սարսափելի ուժով պտտեցնում է երկնքում։ Աւազի ամբողջ ամպեր են սլանում օդի մէջ և արևի երեսը ծածկում։ Մարդիկ ըլխեղդուելու համար պառկում են ու իրանց երեսները շորով ծածկում։ Իսկ ուղտերը աւազի տակն են թագցնում իրանց գըլուխները։ Նիկացած աւազը լցնում է մարդու քիթն ու ականջները, գլուխը սկսում է պտոյտ գալ, ականջները զընգընդոցից ու աղմուկից խլանում են, և դժբախտ ճանապարհորդը վերջապէս ուշաթափուած գետին է գլորուում։ Եթէ այդ ժամանակ էլ չ'ընդհատուի Սամումը—քամին կենդանի թաղում է թէ մարդկանց և թէ ուղտերին։

Մեզնից երկու հազար չորս հարիւր տարի առաջ Սահարայում աւազի տակը մնալով


Խեղդամահ եղաւ Պարսից թագաւորի լիսուն  
Հազար զօրքը:



Առաջի փոշու թագաւորի անոնպատճեւ:

Բացի այդ երկու սարսափելի հողմերը,  
առաք երկրներում անպահան են և սովորա-

Ալան փոթորիկներ, որ մեծամեծ աւերմունք-  
ների պատճառ են դառնում:  
Փոթորիկը երբեմն տաս, հարիւր, նոյն իսկ



Զլուկին թագաւոր ձիու առաջական լուս:

Հազար վերսա տարածութիւն է բռնում և  
պատահում է նոյնպէս, որ փոթորիկի սիւնը

մի քանի սաժէն տրամագիծ է ունենում։  
Վերջին դէպում փոթորիկը սարսափելի  
պտոյտներ է անում և գոյացնում է փոշու  
սիւներ, որոնց վերի ծայրը ամպերու-  
մըն է գտնւում, իսկ ներքեւի ծայրը—գետնի  
վրայ կամ ծովում։ Մըրկային սիւնների մէջ-  
տեղը սովորաբար բարակ է լինում, իսկ ծայ-  
րերը հաստ են և ձագարաձեւ։ Փոթորիկի ալ-  
սիւնները, որ թաթառ են կոչւում, պատահում  
են թէ ցամաքի և թէ ջրի վրայ և միշտ մեծ  
թշուառութիւնների պատճառ են դառնում։  
Յիսուն տարի մեզնից առաջ թաթառ պատա-  
հեց Հիւսիսային Ֆրանսիայի մի գիւղում, որի  
գործարանները և բոլոր մեծ ու փոքր շնու-  
թիւնները քարի հետ հաւասարեցրեց։


### Հրաբուղիների մասին

Ի՞նչ է հրաբուղին։  
Իտալիալի ափերի մօտ, Ստրոմբոլի կղզու  
վրայ մի սար կայ, որի գագաթից միշտ ծխի-  
նման գոլորշի է գուրս գալիս։ Այդ սարի գըլ-  
խին մի ահագին, լայն փոս է բացւում, որ  
ներքեւ գնալով՝ ձագարի նման նեղանում է։  
Այդ հորի տակին եռ է գալիս լաւա։ Լաւան

մի կրակեղէն հեղուկ է, որ առաջացնում են  
քարերն ու հանքերը՝ հալուելով սաստիկ տա-  
քութեան մէջ։ Լաւայի երեսին փոմփուշտ-  
ներ են գոյանում, որ տռաքուելով՝ ջրի գոլոր-  
շի են գուրս թողնում իրանց միջից։ Տռաքուե-  
լու ժամանակ լաւայի ցալտերը այս ու այն  
կողմն են թռչում, հովանում են և գոլորշին՝  
դրանից գոյացած մանր փոշին ու աւազը վեր  
է բարձրացնում իւր հոսանքով։ Ցերեկով լա-  
ւան մե գոյնի է երևում, իսկ գիշերով—կար-  
միր—կրակի գոյնի։ Եւ այդ կրակը լուսաւո-  
րում է սարից գուրս եկող գոլորշու սիւնը։  
Գիշերները գոլորշու այդ սիւնը հրեղէն սիւ-  
նի է նմանում և մօտակայ ծովի վրայի նա-  
մերին փարոսի նման ճանապարհ ցոյց տա-  
լիս։ Ստրոմբոլի սարի լաւան երեք չէ բարձ-  
րանում մինչև սարի գագաթը ու չէ թափ-  
ւում նրա լանցերով։ Բայց կան այնպիսի հը-  
րաբուղիս սարեր, որոնց միջից ժամանակ առ  
ժամանակ գուրս է ժալթքում հեղուկ լաւա։  
Երկրիս վրայ երեք հարիւրից աւելի արդպի-  
սի հրաբուղիներ կան։

Հրաբուղիս սարը իւր արտաքին տեսքից  
կարելի է ճանաչել. նա կոնաձեւ է (շաքարի  
գլխի ձեւ ունի) և հեռուից նման է աւազի  
մի ահագին կոլտի։ Հրաբուղիս սարի գագաթի

սուր ծալը այնպէս է, կարծես թէ կտրուած  
իլինընըուլըո հրաբուղխնեէլ Ստրոմբոլիի նման



Իրանց գագաթին ձագարածև լայն փոս ու-  
նեն, որ ցած իջնելով՝ քանի գնում նեղա-

նում է: Այդ փոսը կոչում է խառնարան:  
Խառնարանից են դուրս գալիս գոլորշին ու  
երեմն էլ՝ լաւան:

Հրաբուղխ սարեր կան, որ մի քանի  
վերստ բարձրութիւն ունին: Այդպիսի սարերի  
գագաթին ձիւնը և կրակը կողքէ կողք պա-  
տերազմ են մղում մէկը միւսի դէմ, կրակից  
ձիւնը հալւում է, բայց այդ բարձրութեան  
վրայ այնպիսի ցուրտ է տիրում, որ ջուրը կը-  
կին սառում է:

Օրինակ, Կամչատկայում մի հրաբուղխ սար  
կալ մօտ հինգ վերստ բարձրութեամբ: Սարի  
ստորոտում, ամառը, ծառերը ծածկւած են լի-  
նում կանաչով. մէկ ու կէս կամ երկու վերստ  
բարձրութիւնից արդէն ձիւն ու սառոյց է  
սկսում մինչև գագաթը, բայց երեմն պա-  
տահում է, որ այդ գագաթից հեղուկ լաւա է  
դուրս ժայթքում:

Կան հրաբուղխներ, որ երկու վերստից էլ  
աւելի խորութիւն են ունենում: Խսկ սրանից  
աւելի խորութիւն ունեցող հրաբուղխներ չը-  
կան. Հրաբուղխի հորով չէ կարելի երկրիս  
մէջը մտնել, որովհետեւ հորի լատակը միշտ  
բռնուած է լինում կամ հեղուկ և կամ սա-  
ռած լաւայով:

Երբ մօտենում է հրաբուղխի ժայթքման

ժամանակը, երկրիս տակից որոտի նման գըղթոց է լսւում, յետոյ զգացւում են ցնցումներ և ստորերկրեալ հարուածներ, որոնցից երկերը շարժում ու դողում է։ Այդ հարուածները զգացւում են հրաբուղից շատ հեռու տեղերումն էլ։ Հարուածները քանի գընում սաստկանումն և աւելի շուտ շուտ յաջորդում իրար։ Աերջապէս ամենաուժեղ հարուածից հորի յատակը ճեղքում է. սարը նոյնպէս ճեղքեր է տալիս. ճեղքերից դուրս են վիժում սպիտակ գոլորշու քուլաներ, որ բարձրանալով՝ մինչև ամպերն են հասնում։

Դժուար է երևակալել, թէ որքան գոլորշի է դուրս գալիս այդ գէպքում։ Գիշեր ցերեկ անընդհատ դուրս է գալիս գոլորշն և ոչ թէ մի կամ մի քանի օր, այլ երբեմն շարունակ ամբողջ ամիսներ։ Քամին անդադար քշում է սարի վրայից այդ գոլորշին, բայց գագաթին շարունակ ամպանման գոլորշու սիւներ են լինում կանգնած։ Դէպքեր են պատահել, երբ այդ սիւների բարձրութիւնը երեք վերստից անցել է։

Գոլորշին, վեր բարձրանալով, ընկնում է մշտական սառնամանիքի սահմանը։ Այնտեղ խտանում է, ամպ դառնում, որից արդէն անձրև է գալիս։ Առանց այդ ամպի

ու անձրևի, առանց որոտի ու կայծակի հրաբուղին ժայթքումները չեն անցնում։ Գոլորշին այնպիսի սարսափելի ոլժով է վեր բարձրանում, որ սարի խառնարանից թնդանօթի նման քարեր ու աւազ է դուրս վիժեցնում։ Այդ քարերը, որ երբեմն մարդու գըլից էլ մեծ են լինում, և մի քանի փութկղուում՝ հարիւրաւոր սաժէններ վեր են բարձրանում, նորից ընկնում սարի լանջերին կամ կրկին խառնարանը և այնտեղից նոր ոլժով դարձեալ դուրս թռչում։

Վերջապէս մի ուժեղ հարուած է լսւում գետնի տակից և հեղուկ լաւան սկսում է վեր բարձրանալ հորի տակից։ Լաւալից քուլա քուլա գոլորշի է բարձրանում՝ իւր հետ տանելով մոխիր ու լաւալի ցալտեր։ Լաւալի այդ ցալտերը այնքան մեծ մեծ են լինում, որ նրանց «քոմբ» անունն են տուել։ Այդ բոմբերը մինչև կէս արշին և երբեմն աւելի մեծութիւն են ունենում։ Մի անգամ Ամերիկայում կոտուպախի հրաբուղից մի բոմբ է դուրս թռռել՝ մէկ ու կէս սաժէն մեծութեամբ։

Հրաբուղից բոմբերի հետ դուրս է գալիս և մանր ու խոշոր մոխիր կամ աւելի ճիշդն ասած մանրացրած լաւա։ Հրաբուղից դուրս թռչող գոլորշին սարսափելի բարձրու-

թեան է հասցնում ալդ մոխիրը: Ահա դըրանից է, որ գոլորշին սպիտակ չէ երեռւմ, այլ դորշ, ինչպէս ծուխ: Այդ պատճառով էլ առում են թէ հրաբուղիս ծուխ է արձակում կամ «ծխում է»: Խսկապէս ալդ ուղիղ չէ. հրաբուղիսի մէջ այրուող բան չը կալ, որ նա ծխէր, ուրեմն այնտեղ չէ կարող լինել և խսկական մոխիր: Լաւալի մոխիրը բոլորովին ուրիշ մոխիր է, ալդ նոյն լաւան է, միայն մանրացած և փոշի դարձած:

Դժուար է երևակալել թէ որքան մոխիր է դուրս գցում հրաբուղիսը: Օրինակ 1835 թուին, Հիւսիսային Ամերիկայի մի հրաբուղից այնքան մոխիր էր դուրս եկել, որ եթէ մի տեղ դէզ տային ալդ մոխիրը, մի ահագին սար կը գոյանար՝ հինգ վերստ բարձրութեամբ և քսանևչորս վերստ տրամագծով: Այդ մոխիրը թանձր շերտով ցըռւած էր հրաբուղիսի շուրջը, մինչև 1500 վերստ հեռաւորութեան վրայ: Հրաբուղից քառասուն վերստ հեռու գտնուող գիւղերը թաղուեցին ալդ մոխիր տակ, որի հաստութիւնը երկուս ու կէս սաժէնի էր հասնում: Սարի վրայ այնքան մոխիր էր թափուել, որ կարծես թէ սարը մէկ ու կէս անգամ մեծացած լինէր: Եւ ահա, մոխիր ալդ հսկալական դէզի վրայ

յորդառատ անձրեւ է տեղում, որ մոխիրի հետ խառնուելով հեղուկ ցեխ է գոյացնում: Այդ ցեխը սարից վայր է հոսում ահագին հեղեղատի նման, որի խորութիւնը երբեմն մինչև երեսուն սաժէնի է հասնում (90 արշին) և լայնութիւնը — մինչև չորս վերստի: Եավա կը զգու վրայ հարիւր տասն և չորս գիւղ տակովն արեց մի այդպիսի հեղեղ: Բացի ալդ սեցեխից, հրաբուղիսի խառնարանից ու սարի ճեղքերից կրակ կտրած լաւա էլ է հոսում դէպի ցած: Եթէ լաւան ճանապարհին ծառերի է հանդիպում, իսկոյն չորացնում է նրանց և այրում: Եթէ ջրհոր է պատահում ճանապարհին ջուրը իսկոյն գոլորշիանում է և փամփուշտի նման ուղղնում լաւան, որ տռաքւում է և ահագին որոտ ու գոչիւն հանում:

Դէպքեր են պատահել, որ հրաբուղիսից լաւալի ամբողջ լճեր են դուրս վիժել: Օրինակ, Մեծ Ովկիանոսի կղզիներից մէկում, մի անգամ լաւալի մի գետ է դուրս վիժել՝ հարիւր վերստ երկարութեամբ, չորս ու կէս վերստ լայնութեամբ և լիսուն սաժէն խօրութեամբ:

Հրաբուղիները ամեն ժամանակ չեն բանում. երբեմն նրանք լաւա, մոխիր և գոլորշի են վիժում, երբեմն էլ հանդարտուում:

Պատահում է որ հրաբուղիսը հազարաւոր տարիներ հանդարտ է մնում, որից յետոյ մի օր, յանկարծ գետնի տակից այնպիսի գոռոց ու որոտ է լսում, կարծես թէ հրաբուղիսը զարթնում է իւր դարեւոր քնից: Այդպիսի հրաբուղիսը պատահում է, որ երկու ամիս, երեսն մի տարի շարունակ մոխիր ու լաւա է վիժում և յետոյ կրկին հանգստանում:

Պոմակէ քաղաքի կործանումը

Իտալիայում, ծովի ափին մի հրաբուղիս կայ անունը Վէզուվ: Հազար ութ հարիւր տարի մեզնից առաջ, ոչ ոք այդ սարը հրաբուղիսէր համարում: Նրա ստորատում մեծ քաղաքներ կալին: Սարի լանջերին և նոյն խառնարանում խաղող էր բնում և տաւարի հօտեր էին արածում: 63 թուականին հրաբուղիսը կարծես սիթափուեց իւր խոր քնից. ժամանակ առ ժամանակ երկրի տակից հարուածներ սկսեցին զգացուել, հողի ճեղքերից գոլորշի սկսեց դուրս գալ: 79 թուականին Վէզուվը զարթնեց, սաստիկ ստորերկեալ հարուածներ տեղի ունեցան. սարի գագաթին գոլորշու և մոխիր ամպ ե-

քեաց: Երկրի տակը դղբդում էր, հողը դողում: Ծովը այնքան արագ իշնել սկսեց տփից, որ շատ ծովային կենդանիներ մնացին ափի վրայ: Յետոյ հրաբուղիսը մոխիր մի ահագին ամպ դուրս ճայթքեց խառնարանից: Ամպը միւնի նման վեր բարձրացաւ, յետոյ իշնելով փոռեց և ծածկեց երկինքը: Օրը ցերեկով արեգակը խաւարեց: Անձրև, մոխիր ու քարեր թափուեցան երկրի վրայ:

Այդ ժամանակ Պոմակէ քաղաքում, որ սարի ստորատումն էր, ներկայացում կար կրկեամում (ցիրկ): Այդ կրկէսը քաղաքի միջումը չէր, ալ մի քիչ քաղաքից հեռու: Պոմակէի կրկէսը այնքան ընդարձակ էր, որ քաղաքի քնակիչների մեծամասնութիւնը տեղաւորւմ էր նրա մէջ: Ներկայացմանը հազարաւոր ժողովուրդ էր եկել: Ոչ ոքի մտքովն էլ չէր անցել թէ հրաբուղիսը վերջ կը դնի ներկայացմանը: Երբ երկինքը մթնեց և կրկէսի պատերը ցնցուեցին, կրկէսից ամենքը փախչել սկսեցին: Մարդիկ ջարդում ու կոխկրտում էին միմեանց: Ոմանք քաղաքն էին շտապում իրանց կալքը ազատելու, ոմանք հակառակ կողմն էին փախչում իրանց կեանքը ազատելու համար: Քաղաքում զարդուրելի տեսարաններ էին տեղի ունենում:

Մթութեան մէջ ոչինչ չէր երեռում։ Երկիրը օրօրուում էր, արձանները, պատերի մասերը վեր էին թափւում՝ ջարդելով իրանց տակը ընկնողներին։ Մարդիկ վայր էին թափւում փողոցներում և տաք մոխիրը, որ անձրեի պէս տեղում էր վերևից, իսկոյն ծածկում էր նրանց։ Նատերը ողջ-ողջ թաղուեցան։ Ով կարողանում էր, դուրս էր վազում քաղաքից։ Մի ականատես պատմում է, թէ այդ միջոցին գիշերուայ նման մութն էր։ Միայն կանանց կոծը, երեխայոց լացը և մարդկանց աղաղակն էր լսում։ Մէկը—իւր հօրն էր կանչում, միւսը—որդուն, երորդը—կնոջը։ Զայնից միայն կարելի էր մարդ ճանաչել։ Մէկը իւր դժբախտութիւնն էր ողբում, միւսը իւր սիրելիներին։ Կային և այնպիսի մարդիկ, որ յուսահատութիւնից մահ էին խնդրում։ Ոմանք իրանց աստուածներին էին օգնութեան կանչում, իսկ ոմանք էլ կարծում էին, թէ աստուածներ չըկան, եթէ ոչ—կ'օգնէին անմեղներին։

«Յանկարծ հեռուից, մթնում, կրակի լոյս երեաց, այդ լաւայի հոսանքն էր գալիս, որ մթան մէջ հրեղէն գետի էր նմանւում։ Բայց լաւան քաղաքի վրայ չ'անցաւ։ Մի քիչ յետոյ քաղաքը հեղեղուեց ցեխի հոսանքով։

Տաճարներ, թատրոններ, տներ—ամեն ինչ թաղուեցին այդ ցեխի տակ։ Ցեխը ծածկեց ամենաբարձր շինութիւնների կտուրները։ Վէ-զուվի այդ վիժումից երեք հռովմէական քաղաքներ ոչնչացան։ Ստարիա, Հերկուլանում և Պոմպէ։ Ծաղկած քաղաքների տեղ սև ճահիճներ գոյացան։ Նուտով այդ սև ցեխն էլ չորացաւ ու պնդեց։ Կամաց կամաց մարդիկ մոռացան, որ այդ հողի տակ քաղաքներ կան թաղուած։ Այս անցքից հազար հինգ հարիւր տարի յետոյ միայն պատահմամբ գտնուեցան այդ քաղաքները և հարիւր տարի սրանից առաջ սկսեցին քանդել այդ տեղերը և պեղումներ անել։ Հողի տակից տներ, տաճարներ, փողոցներ և կրպակներ էին դուրս գալիս։ Մի օճախում հազար ութ հարիւր տարի առաջ թիւած հաց գտան, մի այլ տեղ ձեռագիրներ, թանկագին իրեղէններ և շատ ուրիշ բաներ։ Բայց ամենից գլխաւորը այն էր, որ այդ իրեղէններից իմացան, թէ ինչպէս էին ապրել մարդիկ՝ հազար ութ հարիւր տարի առաջ։

Այդ սարսափելի գէպքից յետոյ, Վէզուվը էլ հանգած հրաբուզն չէ համարլում։ Ժամանակ առ ժամանակ նա գոլորշի, մոխիր և լաւա է վիժում։

Ի՞նչպէս են երգեմն սարեր զսնում:

Հրաբուղիները սարսափելի աւերումներ  
են առաջացնում: Երբեմն նրանց վիթումնե-  
րից մօտակայ սարերը ճեղքճղբոտում և աւեր-  
ւում են և երբեմն էլ տափարակ դաշտում  
յանկարծ սար է բանում: Այդպէս Մէքսիկա-  
յում (Ամերիկա) 1759 թուին, մի տափարակ  
դաշտում, որտեղ սովորաբար սիմինդր և շա-  
քարեղեգն էին աճեցնում, —յանկարծ մի սար  
բուսաւ: Այդ տեղում 1758 թուի յուլիսին  
յանկարծ սարսափելի խուլ որոտներ լսուե-  
ցին գետնի տակից, յետոյ երկիրը սկսեց շար-  
ժուել: Երկու ամիս շարունակ երկրաշարժ-  
երկրաշարժի էր հետեւում: Յետոյ գետինը  
հսկայական փամփուշտի պէս սկսեց վքուիլ  
ու բարձրանալ և այդպիսով մի սար գոյա-  
ցաւ երեք վերստ լայնութեամբ և ուժսուն  
սաժէն բարձրութեամբ: Սեպտեմբերին այդ  
նոր գոյացած սարի գագաթին մի ահագին  
ճեղք բացուեց. գոլորշի, մոխիր ու քա-  
րեր սկսեցին դուրս վիթել այդ ճեղքից: Վեր-  
ջապէս լաւա սկսեց գուրս գալ և այդ շա-  
րունակուեց մի ամբողջ տարի՝ երբեմնակի  
ընդմիջումներով: Կամաց կամաց լաւալից,  
մոխիրից ու քարերից մի մեծ սար գոյացաւ:

Մինչև երկրաշարդը, դաշտի վրայ երկու գետեր էին հոսում: Խակ երբ գետինը ճեղքուեց, գետակները այդ ճեղքը թափուեցին՝ գետնի



տակ իրանց համար ճանապարհ գտան և նոր բիջ դուրս եկան գետնի տակից՝ միայն թէ այդ հրաբուղին միւս կողմից, և այն էլ ոչ թէ

իբրև գետակներ, այլ աղբիւրներ: Այդ աղբիւրների ջուրը տաք էր: Երկու օրում բուսած այդ սարը մինչև օրս էլ կալ Մէքսիկայում և կոչում է Խորուշիօ: Այդպիսի նոր սարեր ոչ միայն ցամաքի վրայ կարող են բուսնել, այլ և ծովի մէջ: Ծովի յատակն էլ պատահում է, որ սկսում է ուռչել, բարձրանալ, վերջապէս ճեղքում է և լաւա ու մոխիր գուրս վիժում այդ ճեղքից: Այդպիսով ծովի միջին յանկարծ մի նոր սար է բանում:

Ի՞նչ կայ երկրիս խորքերում:

Ծովի հետ կոփւ մղելու, նրան յաղթելու և նրա տակից լաւա ու մոխիր վիժեցնելու համար շատ ուժեղ կրակ պէտք է լինի: Բայց հետաքրքրական է իմանալ թէ՝ որտեղից է այդ կրակը: — Ի հարկէ գետնի տակից: Հեղուկ լաւան գետնի խորքերիցն է գուրս գալիս, ուրեմն գետնի տակ այնքան ջերմութիւն կալ, որ քարերը հալում են: Հրաբուղիներ աշխարհիս ամեն ծալրերում կան: Ուրեմն ամեն տեղ էլ գետնի տակ տաքութիւն, կրակ կալ: Գետնի տակից զանազան հանքեր և քարածուխ հանելու համար մարդիկ խոր հորեր

են փորում: Այդ հորերի խորութիւնը երբեմն մի վերստից էլ անցնում է: Ահա այդ հորերում մարդիկ նկատել են, որ քանի ցած ես իջնում, այնքան աւելի տաք է լինում. հորերի ներքեւի շերտերը անհամեմատ աւելի տաք են, քան թէ վերի մասերը: Եւ եթէ կարելի լինէր աւելի խորը թափանցել երկրիս ներսը, կը տեսնէինք, որ այնտեղ էլ աւելի տաք է: Եւ ահա թէ ինչու.

Ոչ միայն հրաբղխալին երկրներում, այլ և այնպիսի տեղերում, ուր բոլորովին հըրաբուղի չը կայ. երբեմն երկրի խորքերիցը աղբիւրներ են գուրս գալիս: Այնպիսի աղբիւրների զրի տաք լինելու պատճառն այն է, որ նրանք տաք հողի միջով են անցել: Ուրեմն երկրի խորքերում տաքութիւն կայ:


Տաք զրեր շատ տեղերումն են գուրս գալիս: Հէնց օրինակ Թիֆլիսի բաղնիսների ջուրը, Պետիգորսկի, Ֆէլէզնովոդսկի տաք զըրերը: Մի քանի զրեր այնքան տաք են, որ մինչև անգամ եռ են գալիս:

Հեռաւոր Հիւսիսում, սառնամանիքի մէջ, մէկ կղզի կալ, որի անունն է Խոլանդիա: Զնայելով մշտական ցրտին այդ կղզու վրայ էլ բղխում են տաք աղբիւրներ: Այդ աղբիւր-

Ներից ամենանշանաւորն է Գէլզեր կոչուածը։  
Գէլզերը նման է ջրհորի և ունի վեց  
սաժէն խորութիւն և սաժէն ու կէս լայնու-  
թիւն։ Այս ջրհորի մէջ ջուրը քվթքվթում, եռ  
է գալիս, ինչպէս կաթսայի մէջ։ կամաց կամաց  
ջրհորի խորքից դէպի վեր է բարձրանում  
ջուրը և հէնց որ հասնում է ջրհորի երեսը՝  
իսկոյն մէկը միւսի ետևից թնդանօթի հար-  
ուածների նման ստորերկրեալ հարուածներ  
են լսւում։ Քանի գնում աւելի յաճախ են  
կրկնում հարուածները և վերջապէս բռն-  
կումն է առաջանում, որից տաք ջուրը ըսկ-  
սում է դէպի վեր խփել բարձրանալով մինչև  
տասնհինգ սաժէն։ Ջրի հետ բարձրանում են  
և քարի կտորներ, որ պոկում են ջրհորի  
ափերից, երեմն այդ քարերը մի քանի փուժ-  
ծանրութիւն են ունենում։ Մի քանի ըոպէ  
այդպէս վեր է խփում ջուրը, որից յետոյ դա-  
դարում է և անհետանում։ Երեսուն ժամից  
յետոյ նորից կրկնում է բռնկումը, սրանից  
յետոյ կրկին դադարում և այսպէս շարու-  
նակաբար մէկ դադարում, մէկ խփում։

Այդ տաք աղբիւրները ապացուց են, որ  
երկրիս ներսում կրակ կայ։

Բայց ինչո՞ւ չենք զգում մենք այդ կը-  
րակի տաքութիւնը։ Որովհետեւ այդ կրակը



Գ է Յ Զ Յ Ե Բ ։

Աղբիւրի տաք ջուրը տասնհինգ սաժէն բարձրու-  
թեամբ վեր է խփում։

մի քանի տասնեակ վերստ խորութեան վրայ  
է, տյնպէս որ մենք այդ կրակից բաժանուած  
ենք հողի մի շատ հաստ շերտով։ Իսկ տա-  
քութիւնը դժուար է անցնում հողի միջով։  
Ուրեմն այդ կրակի գոյութիւնը մենք կարող  
ենք իմանալ միայն հրաբուղխներից և տաք  
ջրերից։

---

Երկրաշարժի եւ հրաբուղխների վիժման  
պատճառը։

---

Ինչի՞ց է առաջանում երկրաշարժը։ Եր-  
բեմն երկրաշարժ պատահում է այն պատճա-  
ռով, որ գետնի խորքերում ջուրը իր համար  
ձանապարհ է բանում՝ միևնոյն ժամանակ  
ընդարձակ ստորերկրեալ անցքեր գոյացնելով  
երկրի մէջ։ Այդպէս առաջացած անցքերը, կամ  
աւելի ուղիղն ասած այրերը, երբեմն այնքան  
ընդարձակ են լինում, որ ամբողջ գիւղեր, նոյն  
իսկ մի ամբողջ քաղաք կարող են տեղաւորել  
երանց մէջ։ Երբեմն այդ անցքերի մի ծայրը  
գետնի երեսին է լինում, և այդ դէպքում  
դժուար չէ անցքը մտնել։ Կան այնպիսի ստոր-  
երկրեալ ճեղքուածքներ, որ մի քանի տաս-  
նեակ վերստ երկարութիւն ունին և գոյաց-

նում են այրեր։ Իսկ այդ այրերի բարձրու-  
թիւնը երբեմն մինչև քառասուն սաժէնի է  
հասնում։ Այդ հսկայական այրերում հոսում  
են ստորերկրեալ գետեր և ստորեկրեալ լճեր,  
կամ նոյն իսկ ջրվէժներ։ Ուրեմն ջուրը ոչ  
միայն երկրի երեսին է իր համար անցքեր  
փորում, այլ և գետնի տակը, երբեմն շատ  
խորը։ Այդ անցքերը երբեմն այնքան լայնա-  
նում ու մեծանում են գարերի ընթացքում,  
որ էլ չեն կարողանում իրանց վրայի ծան-  
րութիւնը պահել։ Եւ երբ որ այդ հսկայա-  
կան անցքերի առաստաղը լանկարծ փլչում է,  
հասկանալի է որ ցնցումն է առաջանում, ո-  
րից յետոյ տրդէն երկրաշարժ է զգացւում մօ-  
տակալքում։

Բայց այրերի փլչելուց երբէք մեծ երկ-  
րաշարժ չէ առաջանում։ Ամենասարսափելի  
երկրաշարժները նրանից են առաջանում, որ  
երկրի խորքերում (թէպէտ և ոչ ստորերկրեալ  
կրակի չափ խոր) ժամանակ տու ժամանակ  
հողի շերտերը շարժւում են իրանց տեղերից։  
Օրինակ, եթէ կաւի մի հաստ շերտ թրջենք,  
կը նկատենք, որ նա բաւականին բարձրացաւ.  
Եթէ կաւի երեսին էլ մի շերտ տւագ լինէր,  
կաւը բարձրանալով կը բարձրացնէր, — ուրեմն  
տեղիցը կը շարժէր — , նաև տւագի շերտը։ Այս-

պէս էլ, գետնի տակը, ահագին շերտեր զանազան պատճառներից կամ ուռչում են, կամ նորից սղմուռմ և իրանցից վեր գտնող շերտերը շարժում իրանց տեղերից: Ուրեմն երկրաշարժի պատճառներից մէկն էլ ստորերկրեալ զանազան հսկայական շերտերի իրանց տեղերից շարժուելն է:

Վերջապէս նրանից էլ է երկրաշարժ պատահում, որ երկրի խորքերում ջուրը կռիւ է մղում ստորերկրեալ կրակի հետ: Ջուրը զանազան անցքերով ու ճեղքերով թափանցում է երկրի խորքերը և այդ խորութեան մէջ տիրապետող տաքութիւնից գոլորշի է դառնում: Իսկ գոլորշու ոյժը հօ ամենքին յայտնի է: Շոգեմեքենալի մէջ շատ գոլորշի չը կայ, սակայն այդ գոլորշին իր յետեից քաշում է մի ամբողջ գնացք, որի ծանրութիւնը հազարաւոր փութերի է հասնում: Ի՞նչ կը լինի ուրեմն, եթէ ամբողջ գետերի, լըճերի, նոյն իսկ ծովերի ջուրը գետնի խորքը թափանցելով, շիկացած լաւային հասնի և գոլորշիանալ: Ո՞րքան շոգի կը գոյանայ այդ ջրերից և ի՞նչ սարսափելի ոյժով կ'սկսի ճնշել այդ գոլորշին ջուրն էլ, հողն էլ: Այդ ոյժը երկիրն էլ կը շարժի, հեղուկ լաւան էլ գետնի ճեղքերից դէպի վեր կը մղի և լաւայի

Հետ ինքն էլ դուրս կը գայ գետնի տակից: Այդ է պատճառը, որ հրաբուղիսների վիժման ժամանակ, խառնարանից լաւայի հետ ջրի գոլորշի էլ է դուրս գալիս: Ծանր լաւան ինքն իրան չէր կարող ներքեւից վեր բարձրանալ, եթէ շոգին նրան չը բարձրացնէր: Լաւան վեր բարձրացնելու համար քիչ գոլորշի չէ հարկաւոր և լաւայի հետ միշտ անչափ գոլորշի է դուրս գալիս: Այդ գոլորշին նաևս սիւնի նման երկինք է բարձրանում, յետոյ թափւում է իբրև լորդառատ անձրւ՝ ամբողջ գետեր և հեղեղատներ կազմում և գիւղեր ու քաղաքներ հեղեղում: Ուրեմն հըրաբուղիսի վիժումն առաջ բերելու համար ջուր էլ է հարկաւոր: Այդ պատճառով էլ հըրաբուղիները մեծ մասամբ կղզիների վրայ, ծովերի ափին և առհասարակ ջրերի մօտ են լինում:

Ջուրը երկրի խորքերում միշտ կռիւ է մղում ստորերկրեալ կրակի հետ և երբ յաղթում դուրս է մղում լաւան—այդ ժամանակ տեղի է ունենում հրաբուղիսի վիժումն:

Իսկ երբ որ ջուրը չէ յաղթում, ջրի կրակի հետ մղած կռուի մասին մենք տեղեկանում ենք այն ցնցումներից և հարուածներից, որ երկրաշարժի ժամանակ զգում ենք գետնի տակից:

Երկրիս երեսին էլ կը ակն ու ջուրը մը շ-  
տական կոիւ են մզում իրար դէմ. կը ակը  
սարեր և կղզիներ է բարձրացնում գետնի  
տակից երկրիս երեսը, իսկ ջուրը միշտ ողո-  
ղում և կամաց կամաց քանդում է այդ սարերը:  
Ինչ շրջան է կատարում՝ ջուրը:

Ծովի ջուրը արևի տաքութիւնից ան-  
դադար գոլորշանում է: Բայց կարող է ար-  
դեօք ծովը ցամաքել դրանից: Ոչ. որովհետև  
գետերը անդադար ջուր են բերում ծովը, իսկ  
իրանք էլ սնուում են փոքրիկ գետակներից:  
Որտեղից է գետակների ջուրը: — Անձրեւից  
ու ձիւնից: Իսկ անձրեւ և ձիւնը գալիս են  
ամպերից: Ամպերը բերում է քամին: Ամ-  
պերը նոյնն են, ինչ որ մառախուղը, իսկ մա-  
ռախուղն էլ արդէն գիտենք, որ գոլորշի է:  
— Ո՞րտեղից է գոլորշին:

— Զրից:

Ջուրը, ուր էլ լինի, միշտ նրանից գո-  
լորշի է բարձրանում և ցնդում շրջապատող  
չոր օդում: Եթէ սենեակում մի բաժակ ջուր  
դնէք, վերջ ի վերջոյ այդ բաժակում մի կա-  
թիլ էլ չի մնալ: Ի՞նչ եղաւ այդ ջուրը:

— Գոլորշիացաւ, օդը ցնդեց և ալդպի-  
սով անտեսանելի դառաւ մեզ համար: Եթէ  
ջրով լիքը բաժակը մի չոր, բայց  
ցուրտ սենեակում դնէք՝ ջուրը այնու ամե-  
նայնիւ կը ցնդի, — թէպէտ և ոչ այնքան շուտ,  
ինչպէս տաք սենեակում:

Ինչպէս որ բաժակի ջուրն է գոլորշիա-  
նում, այնպէս էլ գոլորշիանում է ծովերի,  
գետերի, ճահճների, խոնաւ տեղերի, ան-  
տառների ջուրը, Վերջապէս մարդկանց ու  
կենդանիների շնչառութեան ժամանակ նոյն  
իսկ գոլորշի է առաջանում, որ բարձրանում  
է վեր: Երբ օդի մէջ շատ գոլորշի է լի-  
նում, մարդ զգում է այդ գոլորշու խոնաւու-  
թիւնը, բայց չէ տեսնում գոլորշին: Եւ այդ  
գոլորշին չէ երեսում մեր աչքին, քանի որ  
տաք է օդը: Օրինակ, տաք բաղնիսում  
շատ գոլորշի կալ, բայց չէ երեսում. բաց ա-  
ռէք յանկարծ բաղնիսի գուռը կամ պատու-  
հանը և ցուրտ օդ ներս թողէք. իսկոյն գո-  
լորշին կսպիտակի ու տեսանելի կը դառնայ:

Անտեսանելի թափանցիկ գոլորշին ցըր-  
տից սպիտակում է և անթախանցիկ դառ-  
նում: Այդ սպիտակած և տեսանելի դառած  
գոլորշին է, որ մառախուղ է կոչում՝ քանի

որ դեռ գետնի վրայ է, և ամպ—երբ վեր է բարձրանում:

Ուրեմն ահա թէ ինչ շրջան է կատարում ջուրը: Երբև անտեսանելի գոլորշի նա երկինք է բարձրանում: Այնտեղ, անտեսանելի գոլորշին սպիտակում է ցրտից և ամպ դառնում: Ամպից անձրեւ կամ ձիւն է գալիս: Անձրեսկ և ձիւնով սնւում են գետակներն ու գետերը, գետերով էլ սնւում են ծովերը:

Գոլորշիացած ջուրը օդից դուրս ուրիշ փախչելու տեղ չունի: Ուր որ տանի նրան քամին, —նա չի կորչիլ: Ջուրը երկրիս վրայ միշտ շրջանառութեան մէջ է. Ծովից—ամպերն է գնում, և ամպերից ծովը. այդ պատճառով ծովը չէ կարող ցամաքել:

Ի՞նչու է ամպից անձրեւ գալիս: Որովհետեւ անտեսանելի գոլորշին ցրտում տեսանելի, սպիտակ գոլորշի է դառնում (որ ասել է թէ ամպ), իսկ այդ ամպը—ջուր է դառնում: Ամենքին էլ լալտնի է, որ բաղնիսի ցուրտ առաստաղին ջրի կաթիլներ են հաւաքւում և անձրեսի նման կաթկաթում:

Ամպից անձրեւ գալու պատճառն էլ հէնց նոյնն է, գոլորշին վեր բարձրանալով՝ այդ տեղ տիրապետող ցրտից խտանում է ու անձրեսի կաթիլներ կազմում, որ իրանց ծանրութեան

պատճառով՝ էլ չեն կարող մնալ վերեւում և ներքեւ են թափւում իբրև անձրեւ:

Ե՞րբ է անձրեւ գալիս:

Օդապարիկներով ամպերը բարձրացած մարդիկ պատմում են, որ երեմն չոր, բայց ամպած ժամանակ, ցածում—գետնի վրայ—անձրեւ չէ գալիս, բայց վերեւում, ամպերի տակին, անձրեւ է գալիս:

Ինչից է այդ: Նրանից, որ անձրեսի կաթիլները մինչև գետին հասնելը չորանում են, կրկին գոլորշիանում և էլի վեր բարձրանում: Տաք ու չոր եղանակին միշտ այդպէս է լինում: Իսկ խոնաւ օդում անձրեսի կաթիլները չեն չորանում ու գետին են հասնում:

Երբեմն էլ այսպէս է պատահում. տաք ու պայծառ օրով, յանկարծ մի որ և իցէ տասը ըռապէում կապոյտ երկինքը սպիտակում է, թխպում և սկսում է անձրեւ գալ: Այդ նըրանից է լինում, որ այդտեղ, օդի բարձր խաւերում, յանկարծ ցուրտ քամի է անցնում: Այդ դէպքում նոյն բանն է պատահում, ինչ որ պատահում է բաղնիսում երբ յանկարծ բաց են անում պատուհանը և ցուրտ օդ ներս

թողնում, երկու դէպքումն էլ իսկոյն սպիտակ գոլորշի է առաջանում: Այդ գոլորշին դրսից չեկաւ ներս, այլ մինչև պատուհանի բանալն էլ բաղնիսումն էր, և չէր երևում, որովհետև տաքէր: Ցուրտ քամին էր, որ սպիտակացը գոլորշին և տեսանելի դարձեց:

Ինչպէս են իմացել մարդիկ, թէ ի՞նչ է որոտն ու կայծակը:

Հարիւր լիսուն տարի սրանից առաջ մարդիկ չը գիտէին, թէ ի՞նչ բան է որոտն ու կայծակը: Առաջին անգամ այդ բանը իմացաւ մի ամերիկացի, Փրանկլին անունով: Նա միջոց գտաւ կայծակը ամպերից գետին իջեցնել: Ահա թէ ի՞նչպէս:

Նատերը տեսած կը լինեն, թէ ի՞նչպէս երեխաները թղթէ օձ են շինում, քամու ժամանակ բաց թողնում: Քամին այդ օձը երկինք է բարձրացնում: Փրանկլինն էլ այդ խալալիքի նման մի բան շինեց, միայն ոչ թէ թղթից, այլ մի բաւական մեծ մետաքսէ թաշկինակից, որովհետև թղթէ օձը անձրեսից թրջում և շուտով փչանում է: Օձի ծալրին պոչ շինեց, թոկ էլ կապեց, մի խօսքով

կարգին օձ շինեց և առաջի ծալրին էլ մի սուր ասեղ ցցեց: Որոտ ու կայծակից առաջ Փրանկլինը դաշտը տարաւ իւր այդ օձը և բաց թողեց:

Շուտով օձը երկինքը բարձրացաւ, իսկ Փրանկլինը թոկի ծալրը բռնած՝ ծածկութի (չարդախ) տակ մտաւ, որ անձրեսից չը թրջուի: Երկինքը որոտաց և կայծակ տուեց: Ամբողջ թոկը՝ բացի այն ծալրից, որ Փրանկլինի ձեռքին էր՝ թրջուեց:

Հէնց որ Փրանկլինը մատը թոկի թաց մասին մօտեցըց, իսկոյն մի փոքրիկ կայծակ երեաց և լսուեց մի թեթև տուաքոց: Թէսէտ այդ մի փոքրիկ կայծակ էր, այնու ամենայնիւ իսկական կայծակի նման կապտագոյն լուսով փայլեց ու ծռմռուեց: Այդ փոքրիկ կայծակը ծակեց ու ցնցեց Փրանկլինի ձեռքը:

Ամեն անգամ, երբ Փրանկլինը, կամ մի ուրիշը, մօտեցնում էր ձեռքը թաց թոկին, իսկոյն մի փոքրիկ կայծակ էր երեւում և մի տուաքոց լսում:

Մի ուրիշ գիտնական—Ռոմաս ազգանունով—մի մեծ մետաքսէ օձ շինեց, իսկ թոկի տեղ վերցըց մետաքսէ կտորով փաթաթած մաֆթուլ (երկաթի թել): Փոթորկի ժամանակ մի սաժէնից երկար կայծակներ էին

գուրս գալիս այդ մաֆթուլից: Կայծակի հետ  
լսում էր և մի ուժեղ թնդիւն:

Սրանից պարզ լայտնի եղաւ, որ երկըն-  
քում երևացող փալակն էլ այդ կայծակների  
նման մի բան է, միայն, ի հարկէ, սրանցից  
շատ աւելի մեծ ու ուժեղ է: Այդ կայծակ-  
ները վառարանի կայծերի հետ ոչինչ նմա-  
նութիւն չունին: Վառարանի կայծը ուրիշ  
բան չէ, եթէ ոչ մի կտոր թէժ ածուխ, իսկ  
թուլից գուրս եկած կայծում վառուղի կամ  
այրուղի բան չը կալ:

Այդ կայծը կրակի կայծ չէ, այլ էլէք-  
տրական:

Կրակի կայծ—կրակ եղած տեղումն է  
լինում, իսկ էլէքտրական կայծ—էլէքտրա-  
կանութիւն եղած տեղում: Էլէքտրականու-  
թիւնը, անցնելով օդի միջով, շիկացնում է  
օդը և սա լոյս է տալիս: Ահա թէ ինչ բան  
է փալակը:

Փոթորկալից ժամանակ շատ էլէքտրակա-  
նութիւն է լինում ամպերում, և այդ էլէք-  
տրականութիւնն է փալակի պատճառը: Մե-  
տաքսէ օձի և նրա ծալրից կապած թուկի  
մէջ էլ էլէքտրականութիւն կալ:

Ամեն տեղ էլէքտրականութիւն կալ, մի-  
այն մի տեղ աւել, մի ուրիշ տեղ—պակաս:

Մեծ էլէքտրական կայծակը ոչ միայն  
ծակում է, այլ և ալրում: Այդ պատճառով  
կայծակից հրդեհ կարող է առաջանալ:  
Երկնքի փալակը մի մեծ էլէքտրական  
կայծ է: Էլէքտրական փոքրիկ կայծ մենք էլ  
կարող ենք հանել զանազան միջոցներով: Օ-  
րինակ, վերցրէք մի մեծ կտոր սաթ, բրդէ  
շալով մի քիչ շփեցէք, յետոյ մօտեցրէք ձեր  
ձեռքին և գուռք մի փոքրիկ կայծ կը տես-  
նէք՝ եթէ մթնումն էք կատարել ձեր փորձը:

Նատ ուրիշ միջոցներով էլ կարելի է է-  
լէքտրականութիւն առաջացնել: Այժմ մար-  
դիկ հեշտութեամբ, իրանց քէֆն ուզած ժա-  
մանակ, կարողանում են էլէքտրականութիւն  
առաջացնել և գրանից օգտում են իրանց  
զանազան պէտքերի համար: Օրինակ, էլէք-  
տրականութիւնն է, որ հեռագրի մաֆթուլնե-  
րով այնքան արագութեամբ համբաւներ է  
տանում ու բերում զանազան հեռու քաղաք-  
ներ: Էլէքտրականութիւնն է, որ այժմ լու-  
սաւորում է բազ մաթիւ մեծ մեծ քաղաքնե-  
րի փողոցներն ու հրապարակները, թատրոն-  
ներն և նոյն իսկ տները:

Իսկ թնչ բան է որոտը: Մարդիկ այդ էլ  
իմացան: Մենք տեսանք, որ էլէքտրական  
փոքրիկ կայծակներն էլ մի տուաքոց են ա-

ռաջացնում: Եւ քանի մեծ է լինում կայծակը, այնքան էլ այդ տուաքոցի ձայնը աւելի ուժեղ է լինում: Երկնքում երեղող փայլակն էլ մի մեծ էլէքտրական կայծ է: Հասկանալի է, որ մի այդպիսի մեծ կայծակ, մեծ էլ ձայն կը հանի: Ահա հենց այդ ձայնն է, որ մենք որոր ենք անուանում:

Որոտն ու կայծակը միշտ միասին և միաժամանակ են լինում: Սուանց կայծակի որոտ չէ լինում: Բայց մեզ երբեմն այդպիս չէ թըւում: Եթէ օր ցերեկով է լինում, շատ անգամ որոտը լսում ենք, բայց փայլակը չենք տեսնում, որովհետև առաջն ասում է. «Ճրագի առաջ չախմախը լոյս չի տար». արեի լոյսը չէ թըղնում, որ կայծակի լոյսը երեալ: Երբեմն էլ գիշեր ժամանակ հակառակն է պատահում. երեում է կայծակ, բայց որոտ չենք լսում, այդ էլ նրանից է, որ կայծակը շատ հեռու է լինում և ձայնը չէ հասնում մեզ:

Եթէ կայծակը հեռու չէ մեզնից, — կայծակից անմիջապիս յետոյ լսում է որոտի ձայնը: Իսկ եթէ հեռու է, — առաջ կայծակն է փայլում և մի քիչ յետոյ արդէն լսում է որոտի ձայնը: Նոյն բանը կը նկատէք, եթէ հեռուից գիտէք թնդանօթի արձակումը, առաջ

ծուխն է երեում, իսկ մի քիչ յետոյ լսում է ձայնը թէպէտ ձայնն էլ ծխի հետ միաժամանակ է դուրս գալիս: Հօ չենք ասում, թէ ծուխը չոկ բան է, թնդանօթի ձայնը — չոկ բան: Նոյնպէս և կայծակն ու որոտը չէ կարելի բաժանել իրարից. դրանք միշտ միասին են լինում և այդ միայն թըւում է, թէ կայծակը չոկ բան է, որոտը չոկ բան: Մեզ այդպիս է թըւում այն պատճառով, որ թնդանօթի ծուխը կամ երկնքի կայծակը հեռուից նոյն վայրկենին են երեում, իսկ ձայնը՝ օդի միջով. այդքան շուտ չէ կարողանում մի տեղից միւս տեղ հասնել. որքան մարդ հեռու է լինում կայծակից, այնքան ուշ է լսում որոտը:

---

Ի՞նչպիսի կայծակներ են լինում. եւ ի՞նչ վնասներ են տալիս:

---

Յուրա երկներում կայծակ ու որոտ համարեա թէ չէ լինում, իսկ տաք երկներում յաճախ են պատահում: Օրինակ, Եաւա կղզում համարեա ամեն օր կայծակ է անում և այնպիսի սաստիկ կայծակ, որ մեր երկներում չտեսնուած բան է:

Կայծակը քիչ չարիքներ չէ պատճառում:  
Մարդ է սպանում, հրդեհ գցում: Օրինակ,  
միան Եւրոպական Ռուսաստանում (Ֆինլան-  
դեան Հաշուած) 1870 թուականից մինչև  
1887-ը, 18 տարում—կայծակը 10,500 մարդ  
է սպանել: Նատ է պատահել, որ կայծակը  
ժամերգութեան ժամանակ եկեղեցուն խըփե-  
լով, կոտորել է աղօթողներին: Օրինակ, 1717  
թուին, մի գերմանական քաղաքում, կայծակը  
եկեղեցուն խփելով, 48 մարդ է սպանել ու վի-  
րաւորել: 1769 թուին, մի իտալական քաղա-  
քում, վառօդի շտեմարանին խփելով՝ 300 հա-  
զար փութ վառօդ է կրակ տուել: Այդ հըս-  
կայական պայթիւնից 3000 մարդ էր ոչնչա-  
ցել և քաղաքի մի երբորդական մասը քարու-  
քանդ եղել:

Մեծ մասամբ կայծակը նետի նման սուր  
է լինում, բայց երբեմն պատահում են և  
գնդի նման կլոր կայծակներ, կլոր կայծակ  
լաճախ չէ պատահում, բայց և այնպէս  
երբեմն պատահում է և շատերն են տե-  
սել: Օրինակ 1753 թուին, ոռու գիտնական  
Լոյնոսոսովը և գերմանացի գիտնական Ռիխ-  
մանը ուսումնասիրում էին կայծակն ու որոտն  
և ուզում էին իմանալ գրանց պատճառը:  
Փրանկլինը այդ նպատակով մետաքսեալ օձ

էր բաց թողնում, իսկ սրանք կտրից մի սը-  
րածալը երկաթեալ ձող անցկացրին իրանց  
սենեակը, կարծելով որ փոթորկի ժամանակ  
այդ ձողիցն էլ էլէքտրական կայծեր կը  
դուրս գան:

1753 թուի յուլիսի 25-ին Պետերբուր-  
գում փոթորկի էր. երկինքը գոռգոռում ու  
փայլատակում էր: Ռիխմանը մօտեցաւ և  
ձեռք տուեց երկաթէ ձողին: Ձեռք տալուն  
պէս մի սարսափելի տուաքոց լսուեց: Երկաթէ  
ձողից մի բռունցքի մեծութեան կապտագոյն  
լուսեղէն գունդ դուրս եկաւ: Դա կլոր կայ-  
ծակ էր, որ շանթեց դժբաղդ Ռիխմանի գլուխը,  
անցաւ ամբողջ մարմնով և ձախ գարշապա-  
րից դուրս եկաւ: Թշուառականը տեղն ու  
տեղը մեռած վեր ընկաւ: Նոյն սենեակում  
մի ուրիշ մարդ էլ կար, նա էլ խլացաւ: Վեր-  
ջինս լետոյ ուշքի եկաւ ու պատմեց եղելու-  
թիւնը:


1841 թուի յունիսին մի աւստրիական  
քաղաքում նոյնպէս կլոր կայծակ է տես-  
նուել: Սարսափելի անձրեկի, որոտ ու կայծա-  
կի ժամանակ, փողոցում յանկարծ մի կապտա-  
գոյն հրեղէն գունդ է երևում: Դա կլոր կայ-  
ծակ էր: Գունդը թռչում է օդի միջով, իսկ նրա  
լետեից, չը նայելով սաստիկ անձրեկին, ժողո-

վուրդը վազում է «տեսէք, տեսէք» աղաղակ-ներօվ։ Հրեղէն գունդը կամաց կամաց առաջ է գնում և դէպի վեր բարձրանում։ Վերջապէս թռչում է ուղղակի դէպի գանգակատունը, նրա ծալրի խաչին խփում և աներկոյթանում։ Սլյդ ժամանակ թնդանօթի ձայնի նման մի որոտ է լսում։

Էլեկտրական փայլ կամ լոյս:

Կայծակի ժամանակ, առաւել ևս կայծակից առաջ, շատ էլէքտրականութիւն է լինում ոչ միայն ամպերսւմ, այլ և օդում, հողի մէջ և ամեն տեղ: Երբ մի տեղում շատ էլէքտրականութիւն է հաւաքւում՝ այդ տեղը սկսում է լոյս տալ: Շատ էլէքտրականութիւն է հաւաքւում առ հասարակ սրածարը բաներում, օրինակ նիզմեկներում, գմբէթների խաչերում, նաւերի կայմերում և այլն: Այն ժամանակ դրանց սուր ծայրերը սկսում են լոյս տալ, փալւել: Պատճառն այն է, որ այդ սուր ծայրերից էլէքտրական փոքրիկ կայծակներ են դուրս թռչում, որ մեծ արագութեամբ լաջորդում են իրար: Այդ կայծերը այնքան փոքր են, որ թէպէտ երեսում են, բայց նրանց ձայնը չէ լսում: Եւ մարդու

Թւում է, թէ ալդ մի կապտագոյն փալ  
կամ լոյս է:



Երկու հազար տարի առաջ, հռովմէական  
զօրքը պատերազմի էր գնում: Այն ժամանակ  
գեռ հրացաններ չկալին և զինուորները նի-  
զակներով էին զինուած: Մթնեց: Մօտ էր

Կայծակը: Յանկարծ զօրքի վրայ կապոյտ լոյսի նման մի բան երեաց. այդ նիզակների ծայրերն էին լոյս տալիս, փալլիլում: Զինուորները ուրախացան, բարի նշան համարելով այդ լոյսը, որ յաղթութիւն էր խոստանում նրանց: Նոյն միջոցին նրանց գէմ էր գալիս թշնամու զօրքը: Նրանց նիզակների ծայրերն էլ էին լոյս տալիս և սրանք էլ բարի նշան էին համարում այդ բանը: Բայց իսկապէս այդ ոչ մի նշան չէր, այլ մի բնական երեւոյթ—էլէքտրականութիւն:

Յաճախ, գիշերները նաւերի կալմերի ծայրերը փալլիլում են մի կապտագոյն լուսով: Այդ լոյսը նաւաստիները սուրբ Ելլմի կրակ են անուանում: Իսկապէս այդ կրակ չէ, այլ անկրակ լոյս: Այդ տեսակ լոյս գմբէթների խաչերի վրայ էլ շատ անգամ է երեսում:

### Հըեղն անձրեւ:

Ուր որ էլէքտրականութիւն կալ, այնտեղ էլէքտրական կայծ էլ կարող է առաջանալ: Կայծակից առաջ ամպերում շատ էլէքտրականութիւն է լինում: Ամպերից անձրեւ է գալիս: Անձրեւ կաթիլներումն էլ է էլէքտրականութիւն լինում և երբեմն այնքան

շատ—որ անձրեւ կաթիլները լոյս են տալիս: Այն ժամանակ մարդիկ կարծում են թէ հըրեղէն անձրեւ է գալիս: Տաք երկրներում ալդպիսի անձրեւ յաճախ է պատահում: Հըրեղէն անձրեւ պատճառը չիմացողները, պարզ բան է, որ վախենում են: Բայց ալստեղ ուրիշ բան չը կայ, էլէքտրականութիւնն է այդ լոյսի միակ պատճառը:

### Լոյս մարդկանց վրայ:

Նոյն պատճառով մարդկանց մազերն ու շորերն էլ կարող են լոյս տալ: 1831 թուփ մայիսի 8-ին, մի ամրոցում (Ալժիրում) զբունում էին մի քանի սպաներ: Տաք երեկոյ էր, զգալի էր, որ շուտով կայծակ կը լինի: Սպաները գլխաբաց էին: Երբ որ մժնեց, սպաները նկատեցին, որ իրանց գլխները շրջապատուած են կապտագոյն լուսով, իսկ մազերի ծայրերը լոյս են տալիս: Եւ ոչ միայն մազերը, եղունգներն էլ լոյս էին տալիս: Այդպէս շարունակուեց մինչեւ կայծակի վերջանալը:

Այդպիսի գէալքեր հազուագիւտ չեն: Մի անգամ էլ, նոյնպէս կայծակից առաջ, Հոլլանդիայում մի խումբ գիւղացիներ նկատում են որ իրանց շորերը լոյս են տալիս: Զորս


կողմ են նայում, տեսնում են որ ծառերն էլ, նաւերի կալմերն էլ լոյս են տալիս: Այդ շարունակում է մինչև կայծակի ու որոտի հանդարտուելը:

Կայծակից յետով օդում էլքտրականութիւնը պակասում է, այդ պատճառով էլ լոյս չէ երևում:

Հիւսիսափայլ երկնակամարի վրայ:

Ցուրտ երկներում, որտեղ տարուայ մեծ մասը ձմեռ է լինում, երկնքի վրայ երբեմն զարմանալի ֆալլատակումն է նկատում: Գիշերը՝ երբ արեւը մալը է մտնում, երկնքի մի կողմը (նոր մթնած կողմը) յանկարծ թոյլ լոյս է երևում, որ արշալոյսի է նմանում: Այդ լոյսը երևում է ամպերից բարձը և հետզհետէ աւելի ու աւելի պայծառանալով՝ աղեղի ձև է ստանում: Այդ աղեղը մի ահագին կիսաշրջան է, և կարծես ձգուած է երկրի մի ծալրից մինչև միւսը: Աղեղը ֆալլիում է, վառում և մեծ լոյս տարածում իւր շուրջը՝ թէւ չէ մթնացնում երկնքի աստղերի լոյսը: Աստղերը պսպղում են այդ աղեղի մէջտեղում: Պատահում է, որ միքանի ալդպիսի աղեղներ միասին են գոյա-

նում երկնքում, որոնք մէկզմէկու մէջ են լինում և երևում են շատ հեռաւոր երկրներում:



Հայուսիսափայլ երկնակամարի վրայ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ի՞նչ սովորեցինք այս գործից:

Այս գըքում պատմուած է՝ օդում, ցամաքի վրայ և ջրում տեղի ունեցող՝ մեծ և ահեղ երևոյթների մասին։

Երկրիս երեսին շատ երևոյթներ կան, որ ահ ու սարսափ են պատճառում մարդուս։ Միայն զանազան երևոյթներ զանազան կերպով են վախեցնում մարդուս։

Կան երևոյթներ, ինչպէս օրինակ աւերիչ քամիները, (խամսին, սամում) հըլլաբուզիների ժայթքումները, հեղեղները և այլն, որ սարսափելի են այն պատճառով, որ մահաբեր և աւերիչ են։ Բայց այնպիսի երևոյթներ էլ կան, որ ահ ու սարսափ են պատճառում միտին այն մարդկանց, որ չը գիտեն թէ ինչ բան է այդ. օրինակ, միրաժը (տեսլք), արևի շուրջը կապող շրջանները (բակ), հըլլէն անձրել, նիզակների ծալրերի և մարդկանց շորերի և մագերի վրայ երևացող լոյսը և ալլն։ Հենց որ մարդս հասկանում է այդ

երևոյթների պատճառը, — էլ չէ վախենում նրանցից։

Առաջադէմ ազգերը այժմ ոչ միայն չեն վախենում բնութեան շատ երևոյթներից և ոյժերից, որ երկար ժամանակ սարսափ էին ազդում նրանց պապերին, այլ նոյն իսկ գանազան միջոցներ են գտել և այդ ուժերը սանձահարելով, ծառայեցնում են իրանց։ Քամին և ջուրը գործարանների և ջրաղացների անիւներն են պտտեցնում։ Էլէքտրականութիւնը մարդու միտքն է աշխարհի մի ծայրից միւս ծայրը թուցնում։ Հեռագրի միջոցով։ Մի խօսքով շատ երևոյթներ և ոյժեր, որ վախ ու սարսափ էին ազդում առաջ, այժմ ծառայում են մարդկութեան օգտին։

Կան և այնպիսի՝ իսկապէս մեծ և ահուելի երևոյթներ, որ մարդիկ բոլորովին չեն նկատում։ Նատ մարդ գիտէ արդեօք, թէ ինչեր է անում քամին, ջուրը և ստորերկրեայ կրակը. այն սրանք շատ բան են անում։ Իսկ թէ ինչ—ահա այդ է կազմել գրքոյ կիս բովանդակութիւնը։

Աշխարհիս նրեսին ամենամեծ երեւոյթը մշտական շրջանառութիւնն է, որ անդադար կատարում է երկրիս վրայ։ Այդ շրջանա-

ռութիւնն էլ նկարագրուած է գրքոյկումս:  
Յիշենք այստեղ պատմուածը:

Օդի վերի շերտերում յաւիտենական ցուրտ  
ու սառնամանիք է, իսկ երկրի ներսը այն-  
պիսի ջերմութիւն կալ, որից քարերը հալ-  
ուում են: Յաւիտենական սառնամանիքի մա-  
սին մարդիկ իմացան բարձր սարեր ենելով և  
օդապարիկներով բարձրանալով: Իսկ ստորերկ-  
րեալ կրակի մասին—հրաբուղիներից, տաք ջը-  
րերից, և երկրաշարժներից:

Ստորերկրեալ հեղուկ լաւան ծածկուած  
է հողէ հաստ կեղեսվ, այդ հողէ կեղեկի  
վրայ ծովեր ու ովկիանոսներ կան, իսկ հողի  
և ջրի վրայ—օդն է: Օդն էլ, ջուրն էլ, հո-  
ղըն էլ, ամեն մէկը իւր սեպհական շրջանա-  
ռութիւնն ունի. ամեն մէկը իւր շրջանն է  
կատարում:

Օդը պտտում է այսպէս, շոք երկրնե-  
րում տաքանում է. տաք օդը վեր է բարձ-  
րանում, որովհետեւ նրան դուրս է մղում իւր  
տեղից ցուրտ ու ծանր օդը, որ գալիս է շըր-  
ջակալ ցուրտ տեղերից. սրանից քամի է ա-  
ռաջանում: Վեր բարձրանալով, օդը ցրտում  
է և այդ պատճառով էլի ցած է իջնում:  
Յետոյ էլի կրկին տաքանում ու վեր է բարձ-  
րանում և այսպէս անվերջ: Արևը հաւասար-

չէ տաքացնում բոլոր երկրները: Այդ պատճա-  
ռով էլ զանազան քամիներ են լինում: Ուրեմն  
եթէ արեւը չը տաքացնէր. քամի չէր լինիլ:

Ճուրը այսպէս է պտտում: Ծովից ու  
ցամաքից, անտեսանելի գոլորշի դառնալով,  
նա վեր է բարձրանում, վերեւում տիրող  
ցրտից սպիտակում է, դառնում տեսանելի,  
հաւաքըում է և ամպ դառնում: Ամպից  
տնձըւ և ձիւն է գալիս: Անձրեկ կաթիլները  
գետնի վրայ հաւաքըում՝ առուակներ, գե-  
տակներ և գետեր են կազմում. գետերը ծո-  
վըն են թափւում: Այգպիսով կրկին ծովն է  
վերադառնում գոլորշիացած ու ծովից պակա-  
սած ջուրը: Ջրի ալս շրջանառութեան պատ-  
ճառն էլ արեւն է, որովհետեւ նրա ճառա-  
գալթները ջերմութիւնն է, որ գոլորշիացնում  
է ջուրը:

Հողն էլ իւր շրջանառութիւնն ոմի,  
բայց այդ շրջանառութիւնը նման չէ օդի  
և ջրի շրջանառութեան: Մի տեղ, տեսնում  
ես, ցամաքը կամաց կամաց բարձրանում է  
ջրի տակից, մի ուրիշ տեղ, ընդհակառակը,  
կամաց կամաց նստում է ցամաքը և ծածկ-  
ուում ջրով: Դրանից հետզհետէ ծովի յատակը  
դառնում է ցամաք, իսկ ցամաքը—ծովի յա-  
տակ: Մեր այժմեան բնակութեան տեղերը մի



Ժամանակ ծովի լատակ են եղել, ժամանակ այժմեան ծովերի լատակներն էլ ցամաք կը դառնան և ընդհակառակը շատ ցամաք տեղեր, ուր այժմ մարդիկ են բնակում, — կ'ընկղմուեն ծովի տակ:

Ստորերկրեայ կրակը եւ ջուրը մշտական կոիւ են միշտ իրար դէմ:

Ստորերկրեայ ոյժերը սարեր են բարձրացնում, երկրի երեսին, ամբողջ երկրներ են ջրի տակից լուս աշխարհ հանում. իսկ ջուրը քանդում է սարերը և աւերում ամբողջ երկրներ: Գետերն ու գետակները կամաց կամաց ողողում են իրանց տփերը, ծովի ալիքները քիչ քիչ ամբողջ կղզիներ են աւերում և ջրի տակն անում: Մեծ է ստորերկրեայ կրակի ոյժը, բայց ջրի ոյժն էլ պակաս չէ: Ամբողջ սարեր են գահաւիժում, որոնց տակը կամաց կամաց քանդողը ջուրն է, իսկ գետնի տակից ստորերկրեալ ոյժերը նոր սարեր են բարձրացնում:

Ահա այսպէս է կատարում օդի, ջրի և հողի լաւիտենական շրջանառութիւնը: Այդ շրջանառութիւնն է աշխարհի ամենամեծ եծ երեւոյթը:



4p-155

2013



76	Երկու հեքեամի, Կարմէն Սիլվամի, թ. Ա. Մ. —	10
77	Կոմկասի գերբին, Լ. Տօլստօվի, թ. Պ. Պ. Պ. —	20
78	Սահմանի բաղիկը, Անդերսէնի, թ. Պ. Ա. —	5
79	Ֆիներ, Շիրվանզադէի . . . . .	40
80	Դարմինիզի, Ա. Բալտազանի . . . . .	40
81	Պատրոս Գուրեան, Արշակ Զօտոննեանի. —	50
82	Շիֆոնի կալանաւորը, Մ. Հարում. թ. Կ. Գ. —	60
83	Համայնշեկապիրի, թ. անդ. Յովլ. իսան Մ. —	75
84—87	Անականապատճեն: Հայոց, Ա. Մ. Գառ.	
	բարագնանի 4 համար . . . . .	4
88	Պատմ. Հանոց, թ. առա. Ա. Պայտանանեանի 1	50
89	Ալիսայ Տնութիւնք, Յ. Ճանիկինանի. . . 2	—
90	Արքինօնեցի մանուկը, Ուզդի զրուցներից. —	10
91	Կոչկակարը երաժշտ, Տիւտենիլի . . . . .	5
92	Խոճարենիների երկրում, Ուզդի զրուց . —	10
93	Երմու եղրամի, Տեղ. տիկ. Մնջուների. —	60
94	Մհծապ. Մուրաց., գ. առ. Յ. Պարսնեանի —	40
95	Նախագիտելիք բուսաբանութ. Ա. Քիչմ. —	80
96	Հազարից մէկը, Ն. Մամիկոննեանի. . . —	60
97	Խնչպէս կուզէք, Շեկսպիրի, թ. Յ. Խան. Մ. —	50
98	Գարոցական տառղջապահ., թժ. Վ. Արծ. —	50
99	Կեղեքից վլագ. Վ. Խ. Նևմիրանիչ Գանչէնկօի —	10
100	Գոռոզ արմաւենի, { Վ. Գարշինի, —	5
101	Գոռոզ Ազգէն, { թարզմ. Հ. Ա. —	5
102	Ճանապարհորդ դարար, { ռաքելիան. —	3
103	Մանկան լոտո, պատկերներով, . . . 1	20
104	Գեանափորի երեխան, թ. Շիրվանզադէ. —	15
105	Վ. Ք. Ք. Վ. Վ. Մարգարիտ. թ. Լ. Մ. Ա. —	5
106	Ակամայ մարդասագան, թարզմ. Տ. Յով. —	15
107	Մուֆլու, Ուզդի, թարզմ. Յ. Օհանեանի. —	10
108	Աներեսթ հողագործ, Զ. Գարիլինի . . . —	7
109	Նասպասաւկ, Սլիվիցկու . . . . .	7
110	Ծերունի Մարկոն, թ. Մեղնիկեանի . . —	10
111	Բոմէս և Զուլիէտ, Շեքս. թ. Յ. Խան. Մաս. —	60
112	Ազգակին Զոջեր գ. առ. Յ. Պարսնեանի. 1 —	
113	Զրուցներ Ն. Խուբակինի թ. Մ. Տ. Անդր. —	15

Գիւն կ 35 Կ.